



Մասիս  
Գրականության կենտրոնի  
և հրատարակչության կենտրոնի

MASSIS Weekly  
1000 N. Allen Ave., Suite 101  
Pasadena, California 91104

**ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ**

**«Մասիս»  
Շաբաթաթերթը  
Թեակոխեց իր  
33-րդ Տարին**

ՏՕԳԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

«Մասիս» այսօր դարձաւ 33 տարեկան: Տարեդարձ՝ որ ուրախութեան եւ հպարտութեան անխառն զգացումներով կը գեղու մեր սրտերը, նաեւ, առիթ կ'ընծայէ մեզի՝ կատարելու կարգ մը ամփոփ հաստատումներ անոր առաջնութեան կապակցութեամբ:

Յետադարձ դոյզն ակնարկ մը «Մասիս»-ի բոլորած աւելի քան երեք տասնամեայ տարիներուն վրայ՝ մէկին ցոյց կու տայ փրտնեցնող, լուծման կարօտ դժուարին մարտահրաւրներու կուտակում մը, բարձա՞ծ՝ իր յոգնարեկ ուսերուն վրայ:

Սփիւռֆեան պայմաններու ներքոյ յոյս տեսնող թերթերու շարքին, նաեւ «Մասիս»-ի անգիր պատմութիւնն է այդ, որ արտայայտութիւն կը գտնէր ամէն գնով իր գոյութիւնը պահելու դժուարին կացութեան մէջ:

Նախ՝ նիւթական պայմաններու ստեղծման անհրաժեշտութիւն կար: Եթէ չըլլային իր անմիջական անդամներուն եւ համակրական շրջանակին երախտաշատ նուիրումն ու նեցուկը, դժուար թէ ան կարենար պահել իր գոյութիւնը այս օտար ափերուն: Ամէն բանէ առաջ մեր գնահատանքը կը յայտնենք բոլոր անոնց, որոնք բարոյապէս եւ նիւթապէս գորավիզ կ'անգնեցան եւ կը շարունակեն կանգնիլ «Մասիս» շաբաթաթերթին:

Կար՝ «Մասիս»-ը այժմէական եւ հրապուրիչ դարձնելու հրամայականը, որ կարելի դարձած էր, ըստ հնարարների, բարարարել շնորհի իր շուրջ հաւատուած նկատառութիւններուն վերջին ու նուիրելով աշխատակիցներուն, որոնք առանց ակնկալութեան բերին եւ մինչեւ օրս կը բերեն իրենց երախտաշատ աշխատակցութիւնը: Երախտապարտ ենք անոնց հանդէպ եւ բարձր կը գնահատենք անոնց ներդրումը «Մասիս»-էն ներս:

Բայց ժամանակները իրենց աւերը կը գործեն անսպասելիօրէն, երբ աշխատակիցներու թիւը տակաւ տեղի կուտայ տարիներու սահմանին գուզահետ:

Նոր գրիչներու փնտոտուր արդիւնք չի տար: Ներկայ իրերու դրուածքը այնպիսին էր, որ մահացող յոյուածագիրներուն տեղը բոնողներ չկան: Անոնց մահով գոյացած պարապոյթներ կը մնայ պարապոյթին: Նոյնն էր պարագան հայերէնի ուսուցիչ չի կարեւնալ գտնելու տագնապը: Նոր, ուսեալ սերունդին մօտ հետաքրքրու-

Շաբ.ը էջ 18

**Երեւանի Կեդրոնը Տեղի Ունեցած Բախումներու  
Հետեւանքով Ձերբակալուած Է 20 Հոգի**

Երեւանի կեդրոնը տեղի ունեցած բախումներու հետեւանքով ձերբակալուած է 20 հոգի: Ձերբակալուածներու շարքին է «Յեղակրօն» կուսակցութեան ղեկավար Շանթ Յարութիւնեանը, որ նստացոյց սկսած էր «Ես յեղափոխութիւն եմ սկսում» պատառի ներքեւ: Նոյնմբեր 5-ին Յարութիւնեան փորձեց մի քանի տասնեակ աջակիցներու հետ երթով շարժուիլ դէպի Մաշտոցի պողոտայ, ուր սկսաւ ծեծկռտուք եւ օգտագործուեցան պայթուցիկներ:

Ըստ ոստիկանութեան պաշտօնական հաղորդագրութեան, ձերբակալուած են 38 հոգի, որոնցմէ 18-ը հետագային ազատ արձակուած են:

«Յեղակրօն» կուսակցութեան ղեկավար Շանթ Յարութիւնեանը իր մի խումբ կողմնակիցների հետ մահակներով ու ձողերով զինուած փորձել են երթ կատարել ազատութեան հրապարակից: Ոստիկանութեան ներկայացուցիչները նրանց յորդորել են չխախտել հասարակական կարգը եւ ազատել Մաշտոցի պողոտայի երթեւեկելի հատուածը, սակայն նրանք զրպաններին չհանձնել են ինքնաշէն պայթուցիկներ եւ զենին հարուածելով՝ սկսել են պայթեցնել, ապա մահակներով յարձակուել են իրենց կարգի հրաւիրող ոստիկանների վրայ», ըստած է դէպքի առթիւ ոստիկանութեան տարածած լայտարարութեան մէջ:



Շանթ Յարութիւնեանի կողմնակիցներուն եւ ոստիկաններու միջեւ բախումներ երեւանի կեդրոնը

տարարութեան մէջ:

Բողոքի ցոյցի մասնակիցները սակայն, յայտարարեցին որ բախումները հրահրած են սադրիչները:

Ազգային ժողովի «Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավար, մասնագիտութեամբ փաստաբան Զարուհի Փոստանջեան կարծիք յայտնեց, որ տեղի ունեցած դէպքերը կարելի էր կանխել, բայց ոստիկանութիւնը զիտակցուած է ընտաւ այդ:

«Ոստիկանութիւնը երէկ իր գործողութիւններով չի ապացուցել, որ իր գործունէութիւնը եւ

այդ ծաւալուած գործողութիւնները իրաւաչափ էին, որովհետեւ եթէ կար խնդիր, կային մտահոգութիւններ, ապա դրանք հնարաւոր էր կանխել մինչեւ երթի մեկնարկը: Ես հասկանում եւ զիտակցում եմ, որ նրանք ինչ-որ չափով սպասում էին, որպէսզի հարաւոր լինի ստեղծել բախումներ, որից յետոյ կիրառէին համապատասխան միջոցներ», - ըսաւ պատգամաւորը:

Հայ Ազգային Գոնկրէս (ՀԱԿ) խմբակցութեան ղեկավար Լեւոն

Շաբ.ը էջ 5

**Մահմետականացուած Հայերուն Նուիրուած Գիտաժողով Պողազիչի Համալսարանէն**

Իսթանպուլի Պողազիչի պետական համալսարանէն ներս, շուրջ երկու տարի տեւած կազմակերպչական աշխատանքներէն ետք, տեղի ունեցաւ պատմական նշանակութիւն ունեցող գիտաժողով՝ մահմետականացուած հայերու թեմայով:

Երկու օր տեւած խորհրդաժողովը մտայղացողներու շարքին էին Մալաթիայի Հայերու Ընկերակցութիւնը եւ «Հրանդ Տինք» հիմնադրամը:

«Ազատութիւն» ռատիոկայանի հետ գրոցի ընթացքին կազմակերպիչներէն Աջէ Գիւլ Ալթընա յայտնեց, որ 600-է աւելի մարդ արձանագրուած է խորհրդաժողովին:

«Այս նախեւառջ պատմական խորհրդաժողով է: Առաջին անգամ է որ, վերջին հարիւր տարուայ մէջ մահմետականացուած հայերու թեան կը քննարկուի համապարփակ եւ միջազգային քննօրոհանսի ընթացքին», - ըսաւ Ալթընա շարունակելով. - «2005-ին Պողազիչի, Սապանճի եւ Պիլզի համալսարանները նման խորհրդաժողով կազմակերպած էին, որ տեղի պիտի ունենար այս

մասնաշէնքէն ներս, սակայն մեծ աղմուկ ու բողոքի ալիք բարձրացաւ, եւ այդ յետագոյնցաւ ու վերջապէս տեղի ունեցաւ մասնաւոր համալսարանէ ներս: Բայց 2005-էն յետոյ մենք երկար ճանապարհ անցած ենք»:

Կ'ակնկալուէր, որ այս անգամ եւս խորհրդաժողովի շէնքին առջեւ տեղի ունենար բողոքի ցոյց, սակայն նման բան տեղի չունեցաւ:

2008 թուականին սկիզբ առած՝ թուրքերու եւ քուրտերու կողմէ 1915-ի գոհերուն կարեկցանք յայտնող «Ներողութեան Արշալի» հիմնադիր, լրագրող Չենգիզ Աքթար «Ազատութիւն» ռատիոկայանի ըսաւ, որ թուրք քաղաքացիական հասարակութիւնը սկսած է առերեսուիլ իր իրական պատմութեան հետ:

«Արդէն 10 տարի է՝ թուրքերու լիովին նոր շրջան կ'ապրի: Անոնք կցուած էին արհեստական պատմութեան, որ արդէն գոյութիւն չունի: Ոչ ոք այլեւս չի հաւատար այդ պատմութեան, այդ պաշտօնական պատմութեան: Եւ հիմա թուրքերը բարեբախտաբար

**Հայաստանէն Արտագաղթը Կը Շարունակուի**

Հայաստանի Ազգային Վիճակագրական Մառալութեան (ԱՎՄ) հրապարակած տուեալներուն համաձայն, 2013-ի Յունուար-Սեպտեմբեր ամիսներուն 122 հազար 191 Հայաստանի քաղաքացի անցած է սահմանային կէտերը եւ չէ վերադարձած: Նախորդ տարի չվերադարձաողներու թիւը կազմել էր 109 հազար 405:

Այս թիւերը հերթական անգամ անհանգստութիւն յառաջացուցած են հասարակութեան մօտ, քանի որ շատերը այն ուղղակի կը կապեն արտագաղթի հետ: Մինչդեռ պետական պաշտօնականներ կը շարունակեն պնդել, որ այս ընդամենը սահմանը անցնողներու պատկերն է, իսկ արտագաղթի պատկերը կը յստակացնեն տարեվերջին հրապարակուելիք ուսումնասիրութիւնները:

ԱՎՄ-ի Մարդահամարի եւ ժողովրդագրութեան բաժնի պետ Կարինէ Կոյումջեան այս առթիւ ըսած է,- «Մենք ոչ պատճառով գիտենք, ոչ էլ այս ցուցանիշների մէջ ներառուած է, թէ ինչ ժամ-

Շաբ.ը էջ 4

Շաբ.ը էջ 5

# ՐԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

## ՕԼԻԳԱՐԻՄՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

ՅԱԿՈԲԱՌԻԱՆԻ

Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Արմեն Ալավերդեանն Ազգային ժողովում բազմակի իրադատական հետաքննարկումների արդյունքում 2014 թվականի պիլատեյով նախատեսված եկամուտների մաս 100 միլիարդ աճն ապահովելու համար պետք է անպայման տնտեսական աճ արձանագրուի, որովհետև միևս գործունեների հաշուին հարկերի հաշվարկումը ունի անհնարինություններ:

Արմեն Ալավերդեանը երկար տարիներ է, ինչ զբաղեցնում է ՊԵԿ նախագահի տեղակալի պաշտօնը: Մինչ այդ նա հարկային պետական ծառայության նախագահի տեղակալ էր: Նրա գլխով հարկայինի շատ պետեր են անցել, բայց Ալավերդեանը դեռ կայ: Իսկ դա նշանակում է, որ նա իրենից ինչ որ մի բան իսկապես ներկայացնում է, այլապես գնացողներից մեկն ու մեկի հետ Ալավերդեանին հաստատ ճանապարհած կը լինեին: Ուրեմն եթէ Արմեն Ալավերդեանը խօսում է անհնարինության մասին՝ հարկահաշվարկի միևս գործունեների, ուրեմն դա եթէ ոչ 100, ապա գոնէ 90 տոկոսով այդպես է:

Այսինքն, ՊԵԿ նախագահն արձանագրում է, որ հարկահաշվարկի մասում ՊԵԿ-ի դանակը հասել է բիզնեսի ոսկորին: Ընդ որում, Ալավերդեանը մեկ այլ հետաքրքրական յայտարարություն էլ բացառություն է, որ խօսքը փոքր ու միջին բիզնեսի ոսկորի մասին է: Նա յայտարարել է, որ պետք է պայքարել ստուների դեմ, եւ որ

խոշոր սուպերմարկետները երեւանում ՀԴՄ-ները վերածել են լուսացքի մեքենայի: Թէ յատկապես ինչ գործողություններ են կատարում ՊԵԿ նախագահի տեղակալը, պարզ է, բայց ակնյայտ է, որ նա մատնանշում է խոշորների չհարկուելու մասին:

Խոշոր գործարարներից մեկին՝ Գաբրիլ Ծառուկեանին պատկանող կեդրոն հեռուստաընկերությունը փորձում էին բազմակի հանգամանակից ներկայացնել, որ Ծառուկեանը բարեխղճօրէն կատարում է իր հարկային պարտավորությունները: Այդպիսով Ծառուկեանը պատասխանում էր մամուլի այն հրատարակումներին, համաձայն որոնց Ծառուկեանի բիզնեսները խուսափում են հարկերի լիարժէք վճարումից եւ դրա համար էլ խոշոր հարկատուների 1000-եակում զբաղեցնում են շատ յետին տեղեր:

Ծառուկեանին նախկինում էլ մեղադրել են հարկերը լիարժէք վճարելու համար, բայց կարծես թէ երբեք նա չի փորձել քիչ թէ շատ հանգամանակից հերքել այդ փաստը: Եւ այժմ դրա հերքման փորձը խօսում է ոչ միայն գոյատեւող Ծառուկեանի մաս իրավիճակի եւ պատկերացումների որոշակի փոփոխություն, այլ գուցէ ընդհանուր վիճակի փոփոխություն մասին: Խոշոր գործարարն ըստ երեւոյթին փորձում է պաշտպանուել հնարաւոր գրոհից առաջ, որ պիլատեյ 2014-ի համար կարող է տեղի ունենալ խոշոր բիզնեսի ուղղութեամբ:

Սուպերմարկետների «արքան» Հայաստանում Մամուլէլ Ալեքսանեանն է: Մամուլն օրերս գրեց, որ

նա, Հայաստանում խոշոր երկու առևտրային կեդրոնների սեփականատէր Մամուլէլ Կարապետեանն ու Գաբրիլ Ծառուկեանն օրերս հանգստացել են միասին Տուպաշում:

Ծառուկեանը սուպերմարկետների բիզնես չունի: Առևտրային խոշոր բիզնեսներ ունեն Ալեքսանեանն ու Կարապետեանը: Նրանցից ո՞ւմ մտքով է անցել ՀԴՄ-ները վերածել «լուսացքի մեքենայի», Արմեն Ալավերդեանը կ'իմանայ: Գուցէ նրանք չեն: Բայց այդ դէպքում ովքե՞ր: Ովքե՞ր են, որ կարող են իրենց թոյլ տալ ՀԴՄ-ով սուպերմարկետում լուսացք անել, եթէ Հայաստանում առևտրի երկու խոշոր մագնատներն իրենց դա թոյլ չեն տալիս:

Արմեն Ալավերդեանն իհարկէ աւելին չի մանրամասնել: Հաւանաբար չի էլ մանրամասնի: Ներկայիս վիճակի համեմատ առաւել առանց այդ էլ բաւական շատ է: Վարչապետ Տիրապետեանը 2014 թվականի մասին արտայայտուել էր ոչ այնքան լաւատեսօրէն, այսինքն ասել էր, որ դժուար տարի է սպասոււմ, քանի որ արտաքին տնտեսական գործունեներն էլ նպաստաւոր չեն: Հիմնական «դոնոր» Ռուսաստանում արդէն մի օլիմպիական կրակ անգամ չեն կարողանում խելքը գլխին տեղ հասցնել, ուր մնաց Հայաստանին անհրաժեշտ հասցնեն գոյատեւելու համար:

Հետեւաբար հարկ կը լինի դիմել ներքին ռեսուրսներին: ՊԵԿ նախագահի տեղակալն ասում է, որ հասարակութեան գրպանում էլ ռեսուրս չկայ: Մնացել է խոշոր օլիգարխիայի գրպանը: Իսկ այստեղ արդէն ինդիվիդուալ իսկապէս լուրջ է: Եթէ Աղուան Յովսէփեանը

հասցնի ձեւաւորել միասնական քննչական կոմիտէն, հաւանաբար խոշոր օլիգարխիային հեշտ կը լինի ստիպել ձեռքը տանել գրպանն ու ստուներից ինչ որ բան հանել: Բայց Աղուան Յովսէփեանն օրինակ Մամուլէլ Ալեքսանեանի հայրենակիցն է, նրա հետ շուրջ-պար է բռնել, ծառ տնկել, խաչ կանգնեցրել, էլի շատ բաներ արել հայրենի Ապարանի անունը հասարակական նախաձեռնությունների տարեգրութեան մէջ թողնելու համար: Միթէ Աղուան Յովսէփեանը չի թողնի, որ Ալեքսանեանը ՀԴՄ-ներով լուսացք անի սուպերմարկետում: Միթէ Մամուլէլ Ալեքսանեանը նրա մաս մի լուսացքի իրաւունք չի վաստակել:

Բարդ ժամանակներ են դալիս Հայաստանի խոշոր կապիտալիստների համար: Նրանք անընդհատ սնուում էին հասարակութեանից: Սակայն հանրութեան մի մասն արտագաղթել է, իսկ միևս մասի էլ գրպանն է դատարկուել, եւ այլեւս սնոււ չհարաւորութիւն չկայ: Եւ որպէսզի մինչ այժմ սահուն պատուած անիւր շարունակի պատուել, խոշոր կապիտալիստներն իրենք են ստիպուած սնել հասարակութեանը, որ յետոյ այդ սնուցումն էլ պատի իրենց բիզնեսը:

Իսկ այստեղ առաջանում է խնդիրը: Մնուցելը իհարկէ հեշտ է, փող շատ ունեն, բայց դժուար է համաձայնութեան գալ սնուցման քուխտաների շուրջ: Ով ինչքան է տալու: Տրամաբանութիւնը յուշում է, որ շատ է տալու նա, ով շատ ունի: Բայց Հայաստանում շատ ունեցողները քիչ են վճարում, որովհետեւ շատ է նրանց

Շաբ.ք էջ 18

## ՆԱԽ՝ ԿԱՅԱՆԱԼ, ՅԵՏՈՅ՝ ՀԱՄԱԽԱՄԲՈՒԵԼ

ԷԿԳԱՐ ՎԱՐԴԱՆԵԱՆ,  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱՐԱՆ

Համախմբուելու, միաւորուելու անհրաժեշտութեան մասին խօսակցութիւնները վերջերս կրկին յայտնուել են հայաստանեան հանրային օրակարգում՝ մինչդեռ որպէս կանոն, այդ թեման մոռացիկ է դառնում ընտրական գործընթացի ժամանակ եւ վերջինիս բոլոր փուլերն աւարտուելուց յետոյ, շատ յաճախ գրեթէ մոռացութեան է մատնուում: Յատկանշական է նաեւ, որ այս անգամ համախմբուելու անհրաժեշտութեան մասին խօսում են ինչպէս կուսակցականները, այնպէս էլ անկուսակցականները, վերջիններս, միգուցէ, նոյնիսկ աւելի յաճախ:

Ընդհանրապէս, լայն տարածում ունի այն տեսակէտը, որ հասարակութեան անջաղողութիւնների հիմնական պատճառն այն է, որ վերջինս չի համախմբուում: Սակայն նկատուում է, որ այդքան մեծ կարեւորութիւնն տալով այդ խնդիրն՝ մարդիկ շատ հազուադէպ են անդրադառնում դրա էությունը, բովանդակութեանը:

«Համախմբում» կամ «միաւորում», ըստ էութեան, նշանակում է տարբեր միաւորներին մի տեղ հաւաքելը, նրանց միասնական դարձնելը, նրանց միացման միջոցով թէկուզ ժամանակաւոր ամբողջութիւնն, նոր միաւոր ստեղծելը, ձեւաւորելը: Երբ, օրինակ, ընտրութիւնների ժամանակ միաւորուելու կոչ է արւում, հիմնականում ակնկալուում է, որ գոյու-

թիւն ունեցող տարբեր ընդդիմադիր քաղաքական ուժերը կողմից-իս, դաշինք կը ստեղծեն, եւ ընտրողներն իրենց ձայնը կը տան ոչ թէ տարբեր կուսակցութիւններին, այլ միացեալ ընդդիմութեանը: Այդպիսով ընդդիմադիր հանրութիւնն էլ իւրօրինակ կերպով հանդէս կը գայ որպէս մեկ ամբողջութիւն: Ենթադրուում է, որ այդ դէպքում գործող իշխանութիւններին յաղթելու շանսերը մեծանում են, ակայն, արդեօք ապրիորի դա այդպէս է:

Այն, որ դաշինքի անդամ կուսակցութիւններից իւրաքանչիւրը առանձին հանդէս գալու դէպքում աւելի քիչ քուէ կը հաւաքէր, քան դաշինքը կը հաւաքի՝ արդարացուած հաշուարկ է: Սակայն, անպայման չէ, որ միաւորուելու պարագային միաւորուող սուբիեկտների պտենցիալ ձայներն առանց կորուստների գումարուեն իրար, եւ առաւել եւս փաստ չէ, որ միաւորուելը պարտադիր նպաստելու է յաղթական ձայների գոյացմանը: Առաջինի պատճառն այն է, որ միաւորուելու դէպքում միաւորուող քաղաքական ուժերի պտենցիալ ընտրողների՝ փոխդիմումներ չսիրող հատուածը կարող է դժգոհ լինել նրանից, որ, օրինակ, իր համար անընդունելի սուբիեկտի հետ է միաւորուում իր նախընտրած կուսակցութիւնը եւ այդ պատճառով ընդհանրապէս չմասնակցի ընտրութիւններին կամ նոյնիսկ ցանկանայ պատճել իր երբեմնի հարազատ կուսակցութեանը ու քուէար-

կի այլ ուժի օգտին: Իսկ պնդումը, թէ փաստ չէ, որ դաշինքի ստեղծումը պարտադիր կը նպաստի ընդդիմադիրների յաղթանակին, հիմնաւորուում է նրանով, որ միաւորուող սուբիեկտներից իւրաքանչիւրի պտենցիալ ձայներն առանձին վերցրած կարող են չլինել այնպիսի քանակի, որ դրանց գումարումը ապահովի յաղթանակ (եթէ նոյնիսկ միաւորուելու արդիւնքում այդ սուբիեկտները լիովին պահպանեն իրենց պտենցիալ ձայները):

Բացի այդ, եթէ ընտրութիւնները կեղծուում են, ապա գործող իշխանութիւններին ընդդիմացող հանրութիւնը միանգամայն այլ տրամաբանութեամբ պէտք է մասնակցի ընտրութիւններին, եթէ, իհարկէ, ընդհանրապէս իմաստ է տեսնում մասնակցել նման միջոցաւմանը:

Սակայն հարկ է նշել, որ թէզը, թէ դաշինքով ընտրութիւններին մասնակցելը ապրիորի չի ենթադրում յաղթելու շանսերի աւելացում, դեռ չի նշանակում, որ բոլոր դէպքերում դաշինք կազմելն անիմաստ է: Որոշ պայմանների առկայութեան պարագայում ընդդիմադիր ուժերի համախմբումը կարող է դառնալ ընդդիմութեան յաղթանակի գրաւականը: Այդպիսի պայման կարող է լինել կուսակցութիւնների համեմատ դաշինքների վերաբերեալ աւելի դրական վերաբերմունքի առկայութիւնը հասարակութիւնում, կամ՝ երբ դա-

Շաբ.ք էջ 18

**Մասիս**  
ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

**ՄԱՍԻՍ ՏՄԱԲԱԹԱԹԵՐԹ**

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆԶԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄՔԱԳԻՐ՝  
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ՊԱՅԱՆՔԵԱՆ

ՎԱՐՉԱՎԱՆ ԲԱԺԻՍ  
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, \$80.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$225.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
MASSIS WEEKLY

**ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ**

**Որեւէ իրավիճակում Սերժ Սարգսեանը  
հրաժարական չի տա. Գալուստ Սահակեան**

Աժ «Հանրապետական» խմբակցութեան ղեկավար Գալուստ Սահակեանը նկատել է, որ Մաշ-տոցի պողոտայում տեղի ունեցած միջադէպը ՀՀ-ում կատարուած առաջին դէպքն էր, երբ մարդիկ յարձակուած են ոստիկանների վրայ եւ ծեծուած:

Պատասխանելով լրագրողներին հարցին, նա՝ ի գիտութիւն բոլոր նման արկածախնդիրների, յայտարարեց, որ որեւէ իրավիճակում Սերժ Սարգսեանը հրաժարական չի տայ: «Սովորական ժողովրդավարական ձեւ է հրաժարական պահանջելը: Կան հրաժարական պահանջողներ, բայց այդ պահանջողներից իւրաքանչիւրն իր ստուերային կողմն ունի՝ իբրեւ թէ ընդդիմութիւն ենք, աւելին կարող ենք անել: Ես դեռեւս չեմ տեսել որեւէ քաղաքական թիմ, որը կարող է աւելին անել, յատկապէս, երբ այսօրուայ ընդդիմութեան շարքերում նախկին իշխանութեան ներկայացուցիչներն են», - ասաց նա:

Ըստ նրա, Ոստիկանութիւնում կատարուող բարեփոխումների շնորհիւ էր, որ տուժողները ժողովրդից չեն եղել:

«Ոստիկանութիւնում բարեփոխումները բերեցին նրան, որ ժողովուրդն ինչ էլ անի, մենք պիտի այնպէս անենք, որ յանկարծ որեւէ բան չլինի նրանց, աւելի լաւ

է մեզ մի բան լինի, քան ժողովուրդին», - ասաց Աժ «Հանրապետական» խմբակցութեան ղեկավարը: Դիտարկմանը, թէ հաշուի առնելով այն, որ արդէն քրէական գործ է յարուցուել Շանթ Յարութիւնեանի նկատմամբ՝ մտավախութիւն չկայ՝ արդեօք, որ «քաղբանտարկեալ» տերմինը կրկին կը մտնի շրջանառութեան մէջ, Գալուստ Սահակեանը պատասխանեց, - «Չկարգաւորուած մտքերի արդիւնք են, որ քաղբանտարկեալներ կարող են լինել: Քաղբանտարկեալները նրանք են, ովքեր քաղաքական ֆորմատներ են փոխում, բայց մեր երկրում այդ խնդիրը չկայ՝ քաղաքական շրջադարձերի նպատակ չկայ: Մարդիկ մտածում են, որ հենց խօսում են իշխանութեան դէմ, քաղաքական գործիչներ են, իսկ հենց օրէնքը կիրառուած է նրանց նկատմամբ, ուրեմն քաղբանտարկեալ են, այդպէս չի լինում, արդէն ծիծաղելի է «քաղբանտարկեալ» հասկացութիւնը»:

Դիտարկմանը, թէ միջադէպը չի՞ խօսում այն մասին, որ ժողովուրդը յոգնել է գործող իշխանութիւնից, Գալուստ Սահակեանը նշեց, որ բողոքողներն ազատ են իրենց բողոքն արտայայտելու հարցում, բայց չարձակուելն ու կոշտ գործողութիւններ կատարելը յանցածին են:

**Հնչակեան Երիտասարդները Յորդորում Են  
Քաղաքապետարանին Հրաժարուել  
Տրանսպորտի Թանկացման Ծրագրից**

ՄԴՀԿ «Սարգիս Տիրունի» ուսանողական-Երիտասարդական միութիւնը յայտարարութիւն է տարածել, որով Երեւանի քաղաքապետարանին կոչ է անում հրաժարուել տրանսպորտի թանկացման ցանկացած ծրագրից: Հարողագրութեան մէջ ասուում է. «Վերջին շրջանում կրկին ակտիվացել են տրանսպորտի մասին թանկացման լուրերը: Ծիշող է, քաղաքապետարանի պատասխանատուները չեն նշում, թէ յատկ երբ եւ ինչ չափով են ցանկանում թանկացնել քաղաքային տրանսպորտը, սակայն մի բան յստակ է. ցանկացած թանկացում միանշանակ ազդելու է ժողովրդի առանց այդ էլ ծանր սոցիալական իրավիճակի վրայ եւ հանգեցնելու է նոր սոցիալական լարուածութեան»:

Ելնելով վերոնշեալից, մենք՝ Հնչակեան Երիտասարդները, կարծում ենք, որ այս հարցը պէտք է լուծուի ոչ թէ յօգուտ մի քանի գծատէրերի, այլ Հայաստանի Հանրապետութեան շահերի համար 50 դրամն անգամ լրջագոյն նշանակութիւն ունի ընտանեկան բիւջէն պլանաւորելիս: Արդ, յորդորում ենք քաղաքապետարանին հրաժարուել տրանսպորտի թանկացման ցանկացած ծրագրից: Վստահ ենք, որ մի խումբ գծատէրեր կը կարողանան իրենց հանապազօրեայ հացի հարցը լուծել առանց քաղաքացու դառը քրտինքով վստատիկա՞ծ գումարներին»:

**«Իշխանութիւնն է Մեզ Դարձնում Հանթ,  
Վաղը Նման Հանթեր Հատ Են Լինելու»**

Ազատամարտիկ Խաչիկ Աւետիսեանն Նոյեմբեր 6-ին կայացած ասուլիսին, անդրադառնալով օր մը առաջ Շանթ Յարութիւնեանի մասնակցութեամբ Երեւանում տեղի ունեցած դէպքերին, յայտարարեց, թէ այսօր ունէ մէկը չի կարող եւ իրաւունք էլ չունի մեղադրել նրան, որովհետեւ շանթերը նրանք են, ում համբերութեան բաժակը լցուած է. «Իշխանութիւնն է մեզ դարձնում Շանթ, եւ վաղը ես չեմ զարմանայ, որ նման շանթեր շատ են լինելու»:

Ազատամարտիկի խօսքով՝ Շանթ Յարութիւնեանը, որպէս անհատ, շատ ինքնատիպ բնավորութեամբ եւ մտածողութեան անձ է, եւ նրա երեկուայ գործողութիւններն



ների մասին տեղեակ էին բոլորը՝ եւ՝ իշխանութիւնները, եւ՝ հասարակութիւնը:

«Շանթը որեւէ քայլ գաղտնի չէր անում, բացայայտ ասում էր՝ ինչ է անելու եւ գնաց ու արեց: Նա ազնիւ տղայ է, երիտասարդական աւիւն կայ նրա մէջ, եւ երիտասարդութիւնը Շանթի ետեւից գնում է, - ասաց նա եւ դառնալով պատահածին՝ աւելացրեց, «Գնդապետ Վալերի Օսիպեանին Շանթն ասում էր, որ գնալու են, պայթեցնելու են, Օսիպեանին իր գործողութիւններով դրան դրդեց: Շանթը ցոյց տուեց նաեւ պայթուցիկները, այդ բաժնի պոչերն էլ դարսուած էին Օսիպեանի առջեւ, ինչը՝ Նա չկանխեց այդ ամէնը»:

**Նախկին Ոստիկանը Ակտիվիստ է Ձեւացել**



Ակտիվիստ ձեւացած ոստիկան Արման Արշակեան

NEWS.am-ին նոր մանրամասներ են յայտնի դարձել ակտիվիստ ձեւացած ոստիկան Արման Արշակեանի մասին: Ոստիկանութեան տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերի վարչութեան պետ Աշոտ Ահարոնեանը ասաց, որ Արման Արշակեանը 2009թ Մայիսի 22-ին գորացրուել է, նա ծառայել է ոստիկանութեան գործերում՝ իբրեւ վաշտի հրամանատար, կապիտան է եղել:

NEWS.am-ի թղթակցին յաջողուեց պարզել, որ ակտիվիստ ձեւացած անձը մինչև ոստիկանութեան գործերը աշխատել է Փրկարար ծառայութիւնում:

Յիշեցնենք, որ Նախախորհրդարանը յայտարարութիւն է տարածել, ըստ որի, իրենց շարքերում արդէն երկու ամիս ծախեալ ոստիկան է եղել՝ Արման Արշակեանը: «Որպէս Նախախորհրդարանի աջակից գրանցուած քաղաքացի Արման Արշակեանը՝ Նոյեմբերի 6-ին, Մաշտոցի պուրակում յայտա-

րարութիւն է արել, որ ինքը Նախախորհրդարանի աշխատող է, սակայն դրա համար չի վճարուել: Նախախորհրդարանի քարտուղարութիւնը պաշտօնապէս յայտարարում է, որ Նախախորհրդարանը կամաւորական հիմունքներով գործող ազգային-քաղաքական նախաձեռնութիւն է եւ աշխատողներ չունի, իսկ նրա անդամներն ու աջակիցներն իրենց գործունէութեան համար վճար չեն ստանում:

Քաղաքացի Արման Արշակեանը որպէս Նախախորհրդարանի աջակից է գրանցուել շուրջ երկու ամիս առաջ: Առաջին իսկ օրերից մեզ յայտնի է եղել, որ նա աշխատում է ոստիկանութեան եւ Սամուէլ Ալեքսանեանի համար: Եւ երբ նա արդէն սկսեց Նախախորհրդարանի աջակիցների շրջանում Սամուէլ Ալեքսանեանի օգտին քայքայիչ աշխատանք կատարել, որոշում կայացուեց նրան հեռացնելու մասին», - ասուած է Նախախորհրդարանի յայտարարութիւնում:

**Դերասան Վարդան Պետրոսեանին  
Ձերբակալելու Որոշում է Կայացուել**

Նախաքննական մարմինը որոշում է կայացրել ձերբակալել դերասան Վարդան Պետրոսեանին: Այս տեղեկութիւնը «Ազատութիւն» ռադիոկայանին փոխանցեցին Հայաստանի ոստիկանութեան հասարակայնութեան վարչութիւնից: Իրաւապահները չեն մեկնաբանում որոշման պատճառը՝ արդեօք մտավախութիւն է եղել, որ Պետրոսեանը կը թաքնուի քննութիւնից:



Դերասան Վարդան Պետրոսեան

Նախօրէին հիւանդանոցից դուրս գրուած դերասանը, սակայն, դարձեալ տեղափոխուել է «Էրեբունի» բժշկական կենտրոն՝ առողջական վիճակի վատթարացման պատճառով: Ինչպէս փոխանցեցին հիւանդանոցից, դերասանը ճնշման տատանումներ է ունեցել, սակայն հոսպիտալացման կարիք չի առաջացել: Այստեղից էլ վարդան Պետրոսեանը ուղեգրուել եւ շտապ բուժօգնութեան մեքենայով տեղափոխուել է հոգեկան առողջութեան վերականգնողական «Սթրես» կենտրոն: Հոկտեմբերի 20-ին Եղվարդ - Երեւան աւտոճանապարհին վարդան Պետրոսեանի մասնակցութեամբ տեղի ունեցած ավտովթարի հետե-

ւանքով գոհուել են երկու երիտասարդներ՝ հորեղբորորդիներ էդգար եւ Էդուարդ Յակոբեանները: Դէպքի առթիւ յարուցուել է քրէական գործ Քրէական օրէնագրքի 242-րդ եւ 244-րդ յօդուածներով՝ ճանապարհային երթեւեկութեան կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անգողուլութեամբ առաջացրել է երկու կամ աւելի մարդու մահ, եւ ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելը: Եթէ վարդան Պետրոսեանին այդ յօդուածներով առաջադրուի մեղադրանք, ապա դերասանին կարող է սպառնալ չորսից մինչեւ տասներկու տարուայ ազատազրկում:

**ԼՈՒՐԵՐ**

# Տիգրան Սարգսեան. «Մաքսային Միութիւնն Մտնելով Հայաստանը Կը Շահի»

Մաքսային միութիւնը հայկական տնտեսութեան համար «հնարաւորութիւններ չունի նոր պատուհան» է: Երկարատեւ բանակցութիւններն ու ռուսական ստրատեգիան ներքին, եւ մենք ՄՄ անդամակցութեան յայտ ներկայացնելու հնարաւորութիւն ստացանք: Ուկրաինական «Սեզոնին» թերթի հետ գործընկերութեամբ այս մասին յայտարարել է Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսեանը՝ պատասխանելով հարցնուն, թէ ինչու Հայաստանի իշխանութիւնները որոշեցին մտնել Մաքսային միութիւն:



Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսեան

«Ոչ ոքի համար զաղտնիք չէ, որ ՄՄ-ի հետ ընդհանուր սահմանի բացակայութիւնը հարց էր, որը լրջագոյն ռուսական ստրատեգիան եւ դեմ կողմերի ըմբռնում էր պահանջում: Ոչ ոքի համար զաղտնիք չէ, որ Ռուսաստանը մեր հիմնական առեւտրային գործընկերն է եւ ներդրողը, իսկ հայկական արտադրանքը հիմնականում իրացում է ռուսական շուկայում: Եւ ակնյայտ է, որ Եւրասիական տարածքի մեկուսացումը չի կարող չլինել հանգեցնել մրցունակութեան կորստի, աւելին, կարող են որոշակի սահմանափակումներ ծագել մեր համագործակցութեան համար, ինչը կը խանգարի ՀԱՊԿ-ում մեր ռազմավարական, գործընկերային յարաբերութիւններին: Յետխորհրդային տարածքի փոխյարաբերութիւններում հսկայական ներուժ է «ստեղծուած», եւ հսկայական ձեռնարկութիւնները խիստ շահագրգռուած են, որպէսզի ՄՄ շուկան մեզ համար առաւելագոյնս մատչելի լինի»,- նշել է Սարգսեանը:

Վարչապետը նաեւ յաւելել է, որ ՄՄ երկրները հետ ինտեգրման առաւել բարձր մակարդակը, այդ թւում՝ առեւտրային տեխնիկական խոչընդոտների հեռացումը, իհարկէ, կը խթանի Հայաստանի տնտեսական աճը: Սակայն կան

նաեւ որոշակի ռիսկեր. ՄՄ-ում սակագները կրկնակի բարձր են, քան երրորդ երկրների հետ Հայաստանի մաքսատուքերը: «Մենք որոշակի դժուարութիւնների կը բախուենք: Բայց ընդհանուր առմամբ տեսնում ենք, որ Հայաստանը շահում է Մաքսային միութիւն եւ Միացեալ տնտեսական տարածք մտնելով»:

Ի պատասխան հարցին, թէ արդեօք Հայաստանը, ՄՄ նորմերից ելնելով, կարող է սահմանափակումներ դնել ուկրաինական արտադրանքի վրայ, Սարգսեանը նշել է, որ Հայաստանը երրորդ երկրների ապրանքների համար խոչընդոտներ ստեղծելու խնդիր եւ նպատակ չունի:

### «Մաքսային միութիւնում եւ Միացեալ տնտեսական տարածքում իրօք գործում են միատեսակ մաքսատուքեր, միատեսակ կանոններ, որոնք ապահովում են ապրանքների, ծառայութիւնների, կապիտալի եւ աշխատանքային ռեսուրսների ազատ շրջանառութիւնը: Հայաստանը՝ որպէս ՄՄ-ն եւ ՄՏՏ անդամակցութեան թեկնածու, օրէնդրութիւնների ներդաշնակեցման եւ ինստիտուցիոնալ բարեփոխումների իմպլեմենտացիայի ծրագիր է մշակում»:

## Նիկոլայ Ռիժկով,- «Անթոյլատրելի է ԼՂ Խնդրի Կարգաւորումը Կապել ՄԱ Անդամակցութեան Հետ»

ՌԴ դաշնային խորհրդի անդամ, Հայաստանի ազգային հերոս, Հայաստան-Ռուսաստան միջխորհրդարանական յանձնաժողովի համանախագահ Նիկոլայ Ռիժկովն անթոյլատրելի է համարում Ղարաբաղի կարգաւորումը կապելը Մաքսային միութեան անդամակցութեան հետ, այս մասին լրագրողների հետ հանդիպմանը յայտարարեց նա՝ անդրադառնալով Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի յայտարարութեանը, թէ Հայաստանը չի կարող անդամակցել Մաքսային միութեանը ոչ այս տարի, ոչ էլ՝ միգրացիայի որոշ տարի, քանի դեռ չի լուծուել ԼՂՀ հարցը:



Ռուսաստանի Դաշնային Խորհրդի անդամ Նիկոլայ Ռիժկով

«Թող Լուկաշենկոն իր գործերով զբաղուի, ինչի՞ է նա խառնուում այլ պետութեան գործերին: Բոլորն էլ լաւ գիտակցում են, որ Ղարաբաղի հարցը երկար է, դա այսօրուայ կամ վաղուայ խնդիր չէ, ես չգիտեմ, երբ այն կը լուծուի: Դուք ինձից լաւ գիտէք իրավիճակը: Դրա համար, եթէ նման կերպ ղարբը դիտարկենք, սա նշանակում է, որ Հայաստանը չի անդամակցի Մաքսային միութեանը, այսօր: Ու ընդհանրապէս Լուկաշենկոն

## Ուորլիք. «Ղարաբաղի Վերաբերեալ Համաձայնագրի Ձեռքբերման Համար Պատուհան Է Բացուած

ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Ջէյմս Ուորլիքի ներկայացմամբ, Հայաստանում ու Ադրբեյջանում նախագահական ընտրութիւնների անցած լինելը «հնարաւորութիւնների պատուհան է բացում Ղարաբաղի վերաբերեալ համաձայնագրի ձեռքբերման համար»:

Նման յայտարարութիւն Ուորլիքն արեց Երեւանում՝ լրագրողների հետ կապեցած ճեպագրուցի ընթացքում:

Հայաստանի արտգործնախարար էդուարդ Նալբանդեանն ընդունել էր ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին՝ Ջէյմս Ուորլիքին, Ժակ Ֆորին ու Իգոր Պոպովին, եւ այդ հանդիպումից յետոյ համանախագահները համաձայնեցին պատասխանել հարցերին:

«Մենք յուսով ենք, որ Հայաստանում ու Ադրբեյջանում [տեղի ունեցած նախագահական] ընտրութիւններից յետոյ բացուած է հնարաւորութեան մի պատուհան,

եւ մենք կարող ենք առաջ շարժուել՝ դէպի Ղարաբաղի վերաբերեալ համաձայնագրի ձեռքբերում, ու ԵԱՀԿ Մինսկի խումբը կը ցանկանար կեանքի կոչել դա»,- ասաց Ուորլիքը:

Ամերիկացի համանախագահը նաեւ նշեց, թէ նոր պատերազմի բռնկումը սարսափելի հետեւանքներ կ'ունենայ երկու երկրների ժողովուրդների համար, եւ այդ պատճառով է, որ ԵԱՀԿ Մինսկի խումբը աշխատում է՝ «հասնելու կայուն խաղաղութեան»:

Ուորլիքին, Ֆորին ու Պոպովին ընդունեց նաեւ նախագահ Սերժ Սարգսեանը: Նախագահի աշխատակազմի տեղեկատուութեան միջոցների հետ կապերի վարչութեան տարածած հաղորդագրութեան համաձայն, գրուցակիցները քննարկել են Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան բանակցային գործընթացի ներկայ փուլին եւ հետագայ քայլերին վերաբերող հարցեր: Այլ մանրամասներ չեն հաղորդուում:

## Հայաստանի Զինուած Ուժերը 3այտարարում Վայրերի Տեսչութիւններ Ե Անցկացնում Թուրքիայի Տարածքում

Եւրոպայում սովորական գինուած ուժերի (ԵՍՁՈՒ) մասին պայմանագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետութեան գինուած ուժերի տեսչական խմբի կողմից Թուրքիայի Հանրապետութեան տարածքում 2013թ. Նոյեմբերի 5-ից 12-ը անցկացնում են յայտարարուած վայրերի տեսչութիւններ:

Այս մասին յայտնում են ՀՀ պաշտպանութեան նախարարութեան մամլոյ ծառայութիւնից:

Մէկ այցի ընթացքում կ'իրականացուեն երկու տեսչութիւններ՝ համաձայն ԵՍՁՈՒ պայմանագրի «Տեսչութիւններ» արձանագրու-

թեան 17 կէտի: Տեսչութեան առարկաներն են (հսկողութեան օբիեկտներ)՝ Թուրքիայի Հանրապետութեան ՁՈՒ 3-րդ դաշտային բանակի 9-րդ բանակային կորպուսի Արդահանում եւ Սարիղամիշում տեղակայուած բրիգադները:

Տեսչութեան ընթացքում կ'ստուգուեն պայմանագրով սահմանափակուող տեխնիկայի եւ սպառազինութեան (մարտական տանկեր, մարտական գրահապատ մեքենաներ, հրետանի) քանակը եւ դրանց առկայութիւնը հսկողութեան օբիեկտներում:

## Մահնետականացուած Հայերուն Եւ Գիտաժողով

### Շարունակում է իր ջանքերը

Կամ դժբախտաբար կը բացայայտեն, թէ ինչ պատահած է վերջին 100 տարուայ ընթացքին, ինչպէս այս ազգը ստեղծուած է», - ըսաւ Աքթար՝ աւելցնելով. - «Հիմա տաբուները մէկը միւսի տեսէն փուլ կու գան: Այս ալ, այլ տաբու է կամ լաւ յայտնի զաղտնիք: Բոլորը գիտեն կամ կ'զգան, որ կան մահնետականացուած հայեր, բայց առաջին անգամ է, որ մենք բացէիք բաց կը խօսինք անոնց մասին միջազգային գիտական խորհրդաժողովի ընթացքին»:

Հայաստանէն ազգագրագետ Հրանտի Նաւասեան, որ նոյնպէս ներկայ էր խորհրդաժողովին, յայտնեց, որ դժուար է միանշանակ գնահատական տալ, թէ Պոլսոյ մէջ այսպիսի խորհրդաժողովի կազմակերպումը ինչի հետեւանք է:

«Դեռ տասը տարի առաջ՝ առնուազն 2000-2001 թուականներին, հայ բառի շուրջը կատարուող որեւէ հակաբանական քննարկումն արդէն երեւոյթ պէտք է լինէր եւ էր, այսինքն, եթէ նոյնիսկ համարենք

վերջին տասը տարիների փոփոխութիւնը շատ մեծ է՝ այս իմաստով փոփոխութիւնը: Միւս կողմից, չգիտեմ՝ խնդիրները նաեւ քաղաքականանում են, եւ բացի այս ժողովրդավարական գործընթացը, որի դաշտում թերեւս տուեալ մտահոգութիւնների դրսեւորումներ են, նաեւ շահարկումներ են առաջանում, եւ ես չգիտեմ՝ ի վերջոյ ինչ կարող է լինել, ես միշտ տազնապ ունեմ», - ըսաւ Նաւասեան:

Հայերու ցեղասպանութիւնը առաջին ընդունողներէն, յայտնի թուրք մտաւորական Թանէր Աքչամ կասկած յայտնեց, թէ գիտական խորհրդաժողովները կրնան մեծ ազդեցութիւն ունենալ Թուրքիոյ մէջ հայկական հարցի հանդէպ պետական վերաբերմունքին վրայ: «Այս, անխօս, շատ կարեւոր քայլ է քաղաքացիական հասարակութեան համար, բայց ես չեմ կարծեր, թէ այսպիսի գիտաժողովները մեծապէս կրնան ազդել պետական քաղաքականութեան վրայ մօտ ապագային», - «Ազատութիւն» ռատիոկայանին յայտնեց Աքչամ:

ների, թուրքմենների հետ էլ մենք ընդհանուր սահման չունենք, բայց ապրել ենք իրար հետ, ապրում ենք»,-նշեց նա:

# ԱՐԴԵՕՔ ԻՍԼԱՄԱՑԱԾ ՅԱՅԵՐՈՒ ՅԱՍԻՆ ՊԱՏՐԱՍԵՆՔ ԲԱՐՁՐԱԶԱՅՆ ԽՕՍԵԼՈՒ

## ԳԷՈՐԳ ՊԷՏԻԿՅԱՆ

Ո՞վ է հայը, երբեմն ես ինձի հարց կու տամ:

Թէեւ շատերուն համար այս հարցումը կրկնութիւն կը թուի ըլլալ, բայց նաեւ միւս կողմէ ալ կը կարծեմ, որ իրենց կորսուած յիշողութիւններու ծալքերը կրնայ Զանալ:

Հայ ենք ու մինչեւ այսօր մեր գոյութեան ամբողջ տեւողութեան տառապած ժողովուրդ մը եղած ենք: Այս է մեր ճակատագիրը, արդարացած ենք: Սակայն հակառակ այս բոլոր ճշմարտութեան, այս օրերուն դարձեալ հարց կու տամ՝ ո՞վ է հայը:

Կը հաւատամ, որ մեր ապրած կեանքը հետաքրքրական, կամ աւելի ճիշդ, լաւ ու վատ անակնկալներով լեցուն ըլլալով հանդերձ, հոգեբանական կէտեր ալ ունի: Այսպէս, եթէ գիտենք, որ մեր հարցումը որոշ պատասխան մը չունի, առաւել հաճոյքով կրկին անկամներ հարց կու տանք: Այս մէկը թէեւ կը նմանի օդին մէջ կրակելու պէս բանի մը, բայց ինձի համար մղձաւանջ ալ է:

Միտքս այս ծփացող խոհերէն ազատելու համար, յստակացնեմ:

Նախ ըսեմ, որ այս օրերուն, գրեթէ ամէն առիթներով կը չիռչենք ու կը վերլիչենք մեր մէկ ու կէս միլիոն անմեղ նահատակները: Կը խօսինք մեր Դատի մասին ու մօտէն կը հետեւինք անոր հետզհետէ զարգացող ծալքերուն: Ու յանկարծ մեր աչքին առջեւ կը պատկերացնենք այն նոր երեւոյթը, թէ տակաւին մեր պապենական հողերուն վրայ կ'ապրին հայեր, որոնք իսլամացած են: Այլ խօսքով, մեր հարազատ հողերուն վրայ տակաւին իրենց հայութիւնը

զաղտնորէն պահող հայեր կ'ապրին, որոնք կ'ընեն իսլամ են՝ իսլամ հայ:

Արդեօք նման բան կարելի՞ է ընդունիլ, հասկնալ, համակերպիլ: Կ'ենթադրուի, թէ աւելի քան երկու միլիոնի կը հասնի այս հայերուն թիւը, որոնց համար Մեծ Եղեռնի օրերուն կեանքը ձեռքով մը ունեցած էր տարբեր ներքին հաշտութիւն մը:

Մինչեւ հիմա շատ քիչ խօսուած է այս «հայերուն» մասին: Բայց երբ կամաց կամաց քաղաքականութեան սլաքը փոխուեցաւ, կարծես այս հարցը տաղանապալի ծուխի մը նման եկաւ եւ լեցուց մեր էութիւնը:

Իսլամ հայեր: Այս հայերը, մեկնելով իրենց հաւատքէն՝ կրնա՞նք հայ կոչել, անուանել կամ հայերու դասին շարել: Իսկ իրենք ալ իրենց կարգին, որքանո՞վ կ'ընդունին իրենց հայ ըլլալը: Կ'ուզե՞ն հայ սեպուլի, թէ ոչ կը նախընտրեն ներկայ իրենց այս իրավիճակը շարունակել: Ո՞ր աստիճանի է իրենց ենթագիտակցութիւնը:

Հաւատացէ՛ք, այս սողերը պարզ վանկերու խումբ մը չեն եւ ոչ ալ յանգրու սողանցք, այլ սոսկ մտահոգութիւն եւ մինչեւ հիմա անպատասխան մնացած հարցի մը յայտնաբերում: Իբրեւ աւանդապահ ժողովուրդի մը հարազատ գաւակ, բոլորս ալ գիտենք, որ եթէ հայ ես, ուրեմն քրիստոնեայ պէտք է ըլլաս, ոչ աւելի եւ ոչ պակաս: Մինչեւ հիմա Քրիստոսով ու խաչով լեցուած էր մեր հաւատքը: Ուրիշ կրօն ընդունելի չէր: Ու մեր դարաւոր կրօնին ու հաւատքին համար հեղեղի նման արիւն թափած էին: Վկայ մեր պատմութիւնը:

Դարերէ ի վեր քրիստոնեայ

ենք մեր երեք յարանուանութիւններով: Անհաւատ կամ միասեռական հայտուն մասին չէ մեր ակնարկութիւնը:

Իսկ հիմա ալ՝ իսլամացած հայ: Ի՞նչ ըսել է իսլամ հայ եւ աւելին՝ արդեօք նման հայերու ներկայութիւնը որքանո՞վ ըմբռնելի է կամ ալ ընդունելի է: Այո, ոչ, չեմ գիտեր: Միայն այն գիտեմ, որ իսլամացած այս հայերը երկարատեւ է ի վեր ծածուկ ու մեր սրտերէն անգիտակ, կարծես մեզի հետ լուրթեամբ կը խօսէին ու կ'ապրէին գաղտնի, տեսակ մը ուրուականի նման: Հաւանաբար, մեզի կը սպասէին, մեր գիտակցութեան զարգացման:

Ահա այս օրերուն մէջ տեղն են: Ինչպէս կարելի պիտի ըլլայ գիրենք իբրեւ հաւաքական կերպար՝ ներառել մեր մէջ կամ խառնել հայութիւն կոչուած մեր ազգային արդէն իսկ խառն կաթսային մէջ:

Անկեղծօրէն ըսելով, ինձի համար այս հայերը տակաւին չեն նահանջած, չեն մեռած, կը շնչեն, կ'ապրին: Հայ են, թէեւ տարբեր կրօն ունին: Մեր արիւնէն են, ուզենք կամ չուզենք, ու ճակատագրի բերումով Քրիստոսի փոխարէն տարբեր մարգարէի մը կը հաւատան:

Ուստի կ'ընդունիմ, որ նման հայեր նոր ժամանակներու կը պատկանին: Բայց հարցը այն է, թէ ինչպէ՞ս կարելի պիտի ըլլայ մեր հողին եւ միտքը բանալ դէպի այս իրականութիւնը: Յարդ ամէն բան

լուռ էր, բայց այնպէս կ'երեւի, թէ այդ լուրթիւնը ձայներով լեցուն էր ու մենք չէինք լսած:

Զմոռնանք, որ մինչեւ հիմա ազգովին տուժած ենք, որովհետեւ միակամ ու պատրաստ չենք եղած: Արդեօք հիմա պատրա՞ստ ենք՝ դուք ձեզի հարց տուէք: Ահա այս մէկն է, որ միջուկը կրծող որդերու նման հարց կը դառնայ մեր միտքերուն մէջ:

Ճիշդ է, որ դժուար է երէկը հաշտեցնել այսօրուան հետ:

Բայց՝ գաղտնիքը բացուած է: Հազարաւոր հայեր, յարգելի կամ ոչ պատճառներով, իսլամացած են ու ներկայիս կ'ապրին իրենց պապենական ու հարազատ հողերուն վրայ: Տեղահան չեն եղած: Չեն ջարդուած եւ աւելին՝ մեզմէ աւելի իրենք են այդ հողերուն իսկական եւ իրաւական տէրերը: Անոնք աւելորդ փաստի կամ դատի կարիքը չունին:

Արդեօք պիտի ընդունի՞նք գիրենք իբրեւ հայ: Արդեօք մեր այս նոր որդեգրումը մեղանշում մը պիտի չնկատուի՞ Աւարայր-ներ մղած մեր պայպերուն համար:

Իրականութիւն է, որ իւրաքանչիւրիս մտածելակերպը մեր վաղն է: Գիտեմ նաեւ, որ հայուն կեանքը ինքնին հայոց պատմութիւնն ալ է: Արդ, այս բոլորէն ետք ինչպէ՞ս կարելի պիտի ըլլայ որոնել հայուն ինքնութիւնը:

Ահա 21րդ դարու մեր պատմութեան հարցերէն մէկը: Արդեօք քննելու պատրա՞ստ ենք:

## Արտագաղթը կը շարունակուի

Շարունակուած է 1-էն

42 հազարի:

կէտներով են մարդիկ գնացել, որպէսզի մենք կարողանանք իրենց վերագրել «միգրանտ» կոչումը»:  
Հրապարակուած տուեալներու համաձայն, 1 միլիոն 118 հազար 683 մարդ, միայն Հայաստանի քաղաքացիներ, այս տարուայ 9 ամիսներու ընթացքին երկրէն դուրս եկած են: Մինչդեռ, անցեալ տարի նոյն ժամանակաշրջանին այդ թիւը չէր հասած նոյնիսկ 1 միլիոնի, եւ 957 հազար 153 էր: Փաստօրէն այս տարի երկրէն մեկնողներու թիւ աւելացած է 161 հազար 530-ով:  
Տիկին Կոյունջեան կը վստահեցնէ, որ հիմնականին մէջ վերադարձերը կ'ըլլան Հոկտեմբեր, Նոյեմբեր, Դեկտեմբեր ամիսներուն՝ օրինակ բերելով, որ անցած տարեկան ընթացքին բացասական հաշուեկշիռը 109 հազար 405-ից հասած է

Ժողովրդագիր Ռուբէն Եգանեան կարծիքով, մարդկանց հիմնական մասը կը մեկնի արտագնայ աշխատանքի՝ վերադառնալու մտադրութեամբ: Սակայն, այդ ժամանակաւորը կարող է վերածուիլ մշտականի. - «Հիմա մենք ունենք դրսում ժամանակաւոր միգրանտների մի գնադուած, որը, իմ գնահատմամբ, կազմում է 150-200 հազար մարդ: Ես ուզում եմ օբիեկտիվ լինել. նրանք դեռ չեն խզել կապերը, վերջնական վճիռ չեն կայացրել, բայց, ըստ էութեան, մի տարուց աւելի ժամանակով բնակւում են արտերկրում: Եւ կան այն միգրանտները, որոնց բացակայութիւնը տեսում է վեց ամսից մինչեւ մէկ տարուայ միջակայքում: Բայց այդ մարդիկ էլ, եթէ լինի աշխատանք, ամբողջ ցաւը դա է՝ կը շարունակեն մնալ»:

## Ձերբակալուած է 20 Յոգի

Շարունակուած է 1-էն

Զուրաբեանի կարծիքով, ամէն ինչ հասած է են այն վիճակին, որ շատերը կը դիմեն ամենաձայրայեղ, նոյնիսկ ապօրինի միջոցաւ՝ երկիրը իշխանութիւններէն ազատելու համար:

«Առաջին հերթին պէտք է մեղադրել հենց ռեժիմին, հենց Մեծ Սարգսեանի ղեկավարած իշխանութեանը: Երբ կեղծում ես ընտրութիւնները, այսինքն փակում ես օրեւէ քաղաքական ուժի համար հարցը ընտրութեան միջոցով լուծելու օրեւէ հնարաւորութիւն, երբ փակում ես մարդկանց համար մրցակցելու, աշխատելու, սեփական էներգիայով ինչ-որ բան կառուցելու բոլոր ելքերը եւ ճանապարհները, պէտք է զարմանալ, որ կը գտնուեն մարդիկ, ովքեր համարելով, որ օրինականութեան ճանապարհներ փակուած են եւ կը դիմեն ամենաձայրայեղ քայլերին», - ըսաւ Զուրաբեան:

Ազգային ժողովի փոխնախագահ, իշխող Հանրապետականի մամուլի խօսնակ Էդուարդ Շարմազանովը «Ազատութեան» ռատիոկայանի հետ զրոյցի ընթացքին յայտնեց, որ դժգոհութիւն կայ, բայց իշխանութիւններուն քննադատելու համար օրեւէ երկրի պատիւ չբերող երեւոյթները կարելի չէ արդարացնել:

«Լեւոն Զուրաբեանը լաւ կանխ մտածի, նոր խօսի, որովհետեւ ինքն է եղել իշխանութեան ներկայացուցիչ, եւ կարծում եմ, մարդիկ, ովքեր եղել են իշխանութիւնում, շատ լաւ գիտակցում են, որ պէտք է գիտակցեն՝ հասարակական կարգի պահպանումը սահմանադրական նորմ է, եւ անկախ նրանից՝ ով է իշխանութիւն, ով է ընդդիմութիւն, բռնութեան կոչերը, փայտերով եւ ձողերով յարձակութիւնը, պայթուցիկներ շարտելը ժողովրդավարութեան հետ օրեւէ անհնարութիւն չունեն», - յայտարարեց Շարմազանով:



**ՅԱԲՐՆՈՒՆԸ, ՄԱՅԱԿԱՆԵԱՆԸ, ԵՄ-Ն ՈՒ ՄՄ-Ն**

ԱՐԻԵՏԱ ԽԱԶԱՏՐԵԱՆ

Հայաստանի դեգերումը Մաքսային միութեան եւ ԵՄ-ի միջեւ շարունակում է մնալ շատերին յուզող թեմա: Երէկ տարբեր դրսեւորումներով թեման շուռումուռ տուեցին նաեւ խորհրդարանում՝ նախ արտաքին ոլորտում յատկացումների եւ յանձնաժողովներում պիւտճեւորման քննարկումների ընթացքում, ապա եւ լրագրողների հետ ԵՄ-Հայաստան խորհրդարանական յանձնաժողովի համանախագահ Միլան Յաբրեուի (հայ համառատագրող Սամուէլ Ֆարմանեանի հետ համատեղ) հանդիպման ընթացքում: Յաբրեուին, օրինակ, Սերժ Սարգսեանի հետ հանդիպման ընթացքում Մաքսային միութիւն մտնելու հիմնաւորումներից ազգային անվտանգութեան շարժառիթն էր համոզիչ թուացել, թէ՛ եւ նկատեց, թէ՛ իր խնդիրը չէ համոզիչ-անհամոզիչը գնահատել: Նրա խօսքով՝ Սեպտեմբերի 3-ից յետոյ մէկը միւսի յետեւից Հայաստան այցելած պատուիրակութիւններն ամփոփում են Հայաստանի կատարած շրջադարձի համար, ու չնայեա՛ծ յարգանքին՝ ՄՄ մտնելու Հայաստանի որոշման հանդէպ, այդ պատուիրակութիւնների ներկայացուցիչները չեն զլայցել նշել, որ ՄՄ անդամակցումը անհնարին է դարձնում Ասոցիացման համաձայնագրի ստորագրումը՝ իր տնտեսական բաղադրիչով հանդերձ: Իսկ Հայաստանի պաշտօնեաների կողմից յայտնուող այն տեսակէտները, թէ՛ Հայաստանը ԵՄ-ի հետ համագործակցութիւնը շարունակում է՝ Յաբրեուին համար հասկանալի էր, քանի որ Հայաստանն առանց Եւրոմիութեան հետ համագործակցութեան կարող է դառնալ ուսական գաւառ: Եւրոմիութիւնն էլ կը շարունակի Հայաստանի հետ համագործակցութիւնն այնքան, որքան հնարաւոր կը համարի Հայաստանին հեռու պահել տուեալ հեռանկարից:

Իսկ ընդհանրապէս, ըստ Յաբրեուին, յարգելով Հայաստանի որոշումը՝ ՄՄ մտնելու վերաբերեալ, Եւրոխորհրդարանը Հայաստան-ԵՄ համագործակցութեան նոր հնարաւորութիւններ է մտմտում այս նոր պայմաններում: Ասու լիպին այդ մասին ասելով՝ միաժամանակ այս բովանդակութեամբ ձեւակերպումներ էին արուել ԵՄ-Հայաստան երկու համանախագահների տարածած յայտարարութեան մէջ, որտեղ վերջիններս վերահաստատել են յանձնառութիւնը՝ շարունակել ԵՄ-

ի եւ Հայաստանի միջեւ համագործակցութեան հետագայ զարգացումը, հիմնուած նախորդ տարիներին երկու կառույցների խորհրդարանականների արդիւնաւէտ համագործակցութեան վրայ Հայաստանի եւրոպական օրակարգը առաջ մղելու նպատակով: Քաջաւերում կար՝ ուղղուած Եւրոպական խորհրդարանին՝ ԵՄ-Հայաստան արտօնագրերի դիւրացման համաձայնագրին կանաչ լոյս տալու հետ կապուած, նոյնը ակնկալելով Հայաստանի Ազգային ժողովից՝ մինչեւ Վիլնիւսի գագաթնաժողովը (Եւրոխորհրդարանը վաւերացրել է համաձայնագիրը, Հայաստանի խորհրդարանը՝ քննարկել, վաւերացումը թողնելով յաջորդ քառօրեային): Համանախագահներն, այնուամենայնիւ, հասկանում են այն դժուարութիւնները, որոնք այլեւս թոյլ չեն տալիս շարունակել ԵՄ-Հայաստան Ասոցիացման համաձայնագրի, ներառեալ՝ ԽՀԱ-ԱԳ գործընթացը, ինչպէս նախատեսուած էր այս Նոյեմբերին՝ Վիլնիւսում: Բայց եւ՝ արժանին մատուցում կատարուած աշխատանքի եւ ներդրուած ջանքերի համար եւ կոչ են անում շարունակել նոյն եռանդով՝ յստակեցնելու, թէ՛ ինչպէս պէտք է առաջ շարժուել Վիլնիւսի գագաթնաժողովից յետոյ, ասուած էր յայտարարութեան մէջ:

Իսկ ահա Հայաստանի արտաքին գերատեսչութեանը պիւտճէի յատկացումների քննարկմանը ֆինանսների փոխնախարար Պաւել Սաֆարեանին ուղղուած պատգամաւորական հարցումները ենթատեքստեր ունէին. ինչո՞ւ են պիւտճէում Եւրոինտեգրման ուղղութեամբ ծախսելիք գումարները նոյնը մնում, երբ Մաքսային միութեանը անդամագրուելու յայտարարութիւն կայ (օրինակ՝ 122 մլն դրամ յատկացուելու է օրէնսդրական եւ թարգմանչական աշխատանքներին, նոյնքան՝ որքան 2013-ին է եղել), կամ Եւրոգրամաշտրվների յատկացումների գումարները նոյն չափերով արտացոլուած են նաեւ նոր պիւտճէում՝ երաշխիք կա՞ց, որ դրանք չեն կասեցուի: Չնայեա՛ծ այս հարցերի հասցէատէրը արտգործնախարարութիւնն էր՝ Պ. Սաֆարեանը եւրոգրամաշտրվների գումարների վերաբերեալ համոզուած էր, որ դրանք կը գան: Իսկ ահա հարցը երբ վերատուրուեց փոխարտգործնախարար Ջոհրապ Մնացականեանին, նա նշեց, որ, իրօք, հարցադրումը տեղին է, եւ եթէ ընթացքում հասկանալի դառնայ, որ պէտք է աւելի քիչ օրէնսդրութիւն թարգ-

մանուի, այդ ժամանակ կը վերանային գումարները:  
 2. Մնացականեանը ոչ պատգամաւորների, ոչ լրագրողների հարցերից չխուսափեց: Այս միջանի ամիսների մշտական հարցը՝ 2. Մնացականեանին, թէ՛ Վիլնիւսում վերջապէս ի՞նչ ենք ստորագրելու, ունեցաւ այս կարգի պատասխան. բանակցում է եւրոպացի գործընկերների հետ, որ ստորագրուելիք փաստաթղթի ձեւը եւ բովանդակութիւնը համապատասխան եւ փոխկապակցուած լինեն, ձեւակերպուի հարցերի այն շրջանակը, որով ԵՄ-ի հետ Հայաստանը շարունակելու է աշխատել: Իսկ ահա բովանդակութիւնը կ'արտայայտուի համապատասխան ձեւում: Մնացականեանն ասում էր, թէ՛ Նոյեմբերի 28-ից յետոյ 29 է լինելու, 30-ը՝ եւ կեանքն է շարունակուելու, եւ գործընկերութիւնը: Այս առաւելքան դիւանագիտական պատասխանը, բնականաբար, չհազարեց լրագրողներին, բայց ճշտող հարցերն էլ նոր բան չաւելացրին այս պատասխանին: Միայն այն, որ ստորագրուելիքը (յուշագիր, թէ՛ մի այլ բան) միակ կամ վերջին փաստաթուղթը չի լինելու: Վիլնիւսում ստորագրելիքը պէտք է արտացոլի ե՛ւ այս հանգրուանը, ե՛ւ յարաբերութիւնները հետագայում զարգացնելու նպատակները: Իսկ թէ՛ ո՞վ է գնալու Վիլնիւս՝ արդե֞ք երկրի նախագահը նաեւ, 2. Մնացականեանն նշեց, թէ՛ մասնակցութիւնը հնարաւորինս բարձր մակարդակով է լինելու:  
 Օրերս Հայաստանի առաջին

նախագահը խօսել էր Սերժ Սարգսեանի հրաժարականի եւ արտաքին արկածախնդիր քաղաքականութեան մասին: Այս մասին 2. Մնացականեանին ուղղուած հարցը վերադարձուեց մօտաւորապէս այսպէս. փոխարտգործնախարարն այդպէս չի կարծում, իսկ Հայաստանի հեղինակութեան խնդիր էլ չի տեսնում, քանի որ գործընկերների հետ իրականացում է երկրի շահերից, անվտանգութիւնից բխող քաղաքականութիւն՝ խնդիրների լուծման տարբեր ձեւաչափեր գտնելով: Իսկ գործընկերներն էլ շատ են՝ Եւրոմիութիւնը, նրա անդամ երկրները, Ռուսաստանը եւ այլն:  
 ՀԱԿ-ից Արամ Մանուկեանն, օրինակ, հետաքրքրուեց, թէ՛ եթէ փոխարտգործնախարարն զգայ, որ Մաքսային միութիւն մտնելու պայմանը Ղարաբաղի հարցն է, ի՞նչ դիրքորոշում կ'ունենայ՝ գնահատական տալով նաեւ, թէ՛ արտաքին ոլորտում Հայաստանը մերժուածի կամ ձախողուածի վիճակում է: 2. Մնացականեանը պատասխանեց, թէ՛ չի աշխատում այնպիսի միջավայրում, ուր կարիք կայ հայրենասիրութեան մրցակցութեան, որտեղ հայրենասիրութեան պակաս կամ անպատասխանատուութիւն կայ՝ Ղարաբաղի հարցի հետ կապուած: Եւ նման ընտրութեան կարիք հազիւ թէ լինի, քանի որ այդ հարցում կոնսենսուս (փոխըմբռնում) կայ ե՛ւ պաշտօնեայ մարդկանց, եւ հասարակական կարծիք ձեւաւորողների մէջ, այնպէս որ՝ նման այլընտրանքներ չեն եւ կանգնելու առիթ չենք ունենայ:

# ՄԱՍԻՍ

## ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

---

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
 Enclosed a check for (one year)  
 \* \$50,00 \* \$100,00 (first class) for USA  
 \$ 100,00 (Air Mail) for Canada.  
 \$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----  
 Address: -----  
 City: ----- State: ----- Zip Code: -----  
 Country: -----  
 Tel : ----- Fax : -----

**Bedros S. Maronian**  
818/500-9585

**Siamanto B. Maronian**  
818/269-0909




SERVING THE COMMUNITY SINCE 1975  
 More locations and more ways to service your insurance and financial needs

6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048	805 East Broadway Glendale, CA 91205	300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101
---	---	--

- Life Insurance
- Health Insurance
- Group & Individual
- Long Term Care
- Disability

- Estate Planning
- Will & Living Trust
- Full Annual Review
- Mortgage Protection
- College Planning


- Workman's Compensation
- Employee Benefits
- Annuity
- IRA
- 401K & 403b




**A.A. INSURANCE SERVICES**

**Insurance coverage can help you financially!**  
 Ապահովագրութիւնը Աձիրաձեղսւ Է

Coverage & Protection should be on the top of your priority list.






Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

16th International Armenia Fund

# Telethon 2013 | NOVEMBER 28 Thanksgiving Day



## Գեալի Արցախ En Route Artsakh

Scan Below  
and Donate  
**\$10!**



**Text ARMENIA to 50555 to give \$10 to Armenia Fund Inc. Reply with YES to confirm your donation.**

\$10.00 donation to Armenia Fund Inc. Charges will appear on your wireless bill, or be deducted from your prepaid balance. All purchases must be authorized by account holder. Must be 18 years of age or have parental permission to participate. Message and Data Rates May Apply. Text STOP to 50555 to STOP. Text HELP to 50555 for HELP. Full Terms: mGive.org/T. Privacy Policy: mGive.org/P

City-State-Region	Station	Digital Channel	Cable Channel	Satellite	Time
<b>Northern California</b> San Francisco & Bay Area	<b>KTSF</b> Channel 26	<b>26.1</b>	<b>AT&amp;T U-VERSE</b> Channel 8 <b>CHARTER</b> Channel 98 <b>COMCAST</b> Channel 8, 16, 20, 21, or 26	<b>DIRECTV</b> 893 <b>DISH</b> 26 or 8237	<b>8am to 7pm</b> PST
<b>Central California</b> Fresno and Mid-State	<b>KGMC</b> Channel 43	<b>43.1</b>	<b>COMCAST</b> Channel 10 <b>AT&amp;T U-VERSE</b> Channel 43	<b>DIRECTV</b> 43 <b>DISH</b> 43	<b>8am to 8pm</b> PST
<b>Southern California</b> Greater Los Angeles Area	<b>KSCI</b> Channel 18	<b>18.1</b>	<b>AT&amp;T U-VERSE</b> Channel 18 <b>VERIZON FIOS</b> Channel 18 <b>Major Cable Systems</b> Channel 18	<b>DIRECTV</b> 18 <b>DISH</b> 18	<b>8am to 8pm</b> PST

For all other locations please tune in to our live webcast at

8:00am-8:00pm PST

**webcast** [www.ArmeniaFund.org](http://www.ArmeniaFund.org)



**1-800-888-8897**

### ՎԵՆ ՆԱՅՍԻ ՍՈՒՐԲ ՊԵՏՐՈՍ ԶԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿՈՍԻՏԱՍ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻ 30-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ

Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան կիրակի, Հոկտեմբեր 27ին, 2013, «Գիւտ Խաչի» Տօնին օրը Սուրբ Պատարագ մատուցեց Վէն Նայսի Սուրբ Պետրոս Հայց. Եկեղեցւոյ մէջ եւ քարոզեց օրուան խորհուրդին շուրջ: Սուրբ Սեղանին սպասարկեցին Ծուխի Հոգեւոր Հովիւ՝ Արթ. Տ. Շնորհք Աւագ Քհնյ. Տէմիրճեան եւ Սարկաւազները:

Արարողութեան ընթացքին Սրբազան Հայրը դպրութեան չորս աստիճաններ շնորհեց Անդրանիկ Տօլլաթեանի, Կարապետ Թէմամեանի եւ Յարութ Մարգարեանի: Ապա Ուրար կրելու իրականութեանը պարզեց Յարութ Մարգարեանի եւ Արարատ Գալիսիականի:

Սրբազան Հայրը Սուրբ Խաչի Խորհուրդի մասին խօսելով, իր պատգամին մէջ ըսաւ.

«Այսօր Գիւտ Խաչի Տօնն է: Եկեղեցին այս սրբազան Պատարագի ընդմէջէն անգամ մը եւս վեր կը հանէ խաչին խորհուրդը, որպէսզի նոյն խաչին խորհուրդով լեցուած՝ յագեցնենք մեր հոգեւոր կեանքի ծարաւը:

Օրուան տօնին խորհուրդը մեզի կը պատմուի առաւելաբար շարականներու երգեցողութեամբ, թէ ինչպէս 326 թուականին խաչը հանդիսաւոր բարձրացման ու հրապարակային փառաբանութեան արժանի կը դառնայ: Պատմական այս դէպքին պատճառը կը դառնայ Կոստանդինոս կայսեր մայրը՝ Զեդինէ, որու ստիպումներուն վրայ Յուդա անունով Երուսաղէմացի մը յանձն կ'առնէ խաչափայտը գտնելու պարտականութիւնը, որ իրագեկ էր, թէ ուր էին պահած Փրկչական խաչն ու երկու այն խաչերը, որոնց վրայ մահապատիժի ենթարկուեցան երկու աւագանները:

Աւանդութեան համաձայն, երբ երեք խաչերը կը գտնուին, ապա Փրկչական խաչին ստուգումը կատարելու համար, խաչերուն կը մօտեցնեն մեռեալ պատանիի մը մարմինը, որուն հպումով կը զանազանուի խաչափայտը Տէրունական, երբ նոյն խաչին վրայ մեռեալ պատանին յարութիւն կ'առնէ: Այս մեծահրաշ զէպքի մասին կը պատմեն շարականները. «Այսօր ի ձեռն փրկական սուրբ խաչին կենսագործի պատանին մեռեալ է. եւ ողբայ աստանայ զկործանումն իւր. իսկ մեք Քրիստոսի հաւատացեալք երկրպագեցուք Աստուածային սուրբ նշանի»: Ի տես կատարուածին, Երուսաղէմի օրուան Հայրապետ՝ Կիլիքեղ Եպիսկոպոս խաչը կը բարձրացնէ յաչս հաւատացեալներու, որուն առջեւ երկիւղածութեամբ կ'երկրպագեն: Ահաւասիկ այս հրաշքին յիշատակութիւնն է, որ կը տօնախմբէ Եկեղեցին ամէն տարի Հոկտեմբերի վերջը»:

Ուրարիութեամբ կը հաղորդենք, որ Սուրբ Պատարագի աւարտին Եկեղեցւոյ Սրահին մէջ Սրբազան Հօր նախագահութեամբ եւ ի ներկայութեան մեծ թիւով հաւատացեալներու, պաշտօնապէս նշուեցաւ Եկեղեցւոյ «Կոմիտաս Երգչախումբ»ի հիմնադրութեան 30րդ տարեդարձը: Այս առթիւ հրատարակուած յուշամատենին մէջ տպուած էր Սրբազան Հօր պատգամը, որուն մէջ Սրբազան Հայրը կը գրէր.

«Այս առթիւ յատուկ աղօթք կը բարձրացնենք Սուրբ Պետրոս Հայց. Եկեղեցւոյ հոգեւոր Տ. Շահէ Աւագ Քհնյ. Մէմիրճեանի հոգիի խաղաղութեան համար, որ 30 տարի առաջ գեղեցիկ գաղափարը ունեցած է հիմնելու Եկեղեցւոյ Կոմիտաս Երգչախումբը՝ որպէս խմբավար ունենալով լուսահոգի Յակոբ Յակոբեանը:

Շատերը, սակայն, պատուով դիմակայեցին: Փառք բոլոր այդ մարդկանց՝ մանկավարժ ու քաղաքական գործիչ, ուսանող ու հոշագործ, պաշտօնեայ ու մտաւորական, լրագրող ու բժիշկ, հոգեւորական ու արուեստագէտ... Հերոս մարդիկ: Մաքառումի այդ ծանր օրերին նրանցից շատերը պոռթկացին՝ կրելով հոգեկան ու ֆիզիքական տառապանքներ, շատերը դիմացան՝ սեղմուած ատամներով, շատերը... Փրկուեց ամենականը՝ այն արժեհամակարգը, այն հոգեւոր դաշտը, առանց որի կը կտրուէր պատմութեան շղթան:

18-րդ դարի վերջ՝ լեզգիների եւ կովկասեան ցեղերի արշաւանք, մշակոյթի ու կենաց ընդհատում: 1918 եւ 1921 թթ.՝ թրքական զօրքերի արշաւանք, արիւնոտ ցեղասպանութիւն: 2003-2012 թթ.՝ երիտվրացիների քաղաքական ուղեգիծ, մշակութային ընդհատման եւ տեսակի ձեւախեղման վտանգի շրջան:

Զաւախասայութիւնն ապրեց հերթական արհաւիրքի ծանր օրերը...

2012 թ. Հոկտեմբեր - 2013 թ. Հոկտեմբեր. Զաւախասայութիւնը թեւակոխեց նոր՝ հակասութիւնների, անորոշութիւնների, նաեւ՝ յոյսի ու հաւատի մի շրջան:

2013 թ. Հոկտեմբեր. սպասելիքների մի նոր սկիզբ:

### ՈՒՐՈՒՆԿ ԿԱՐՕ ԴԵՐՁԱԿԵԱՆԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՅԱՐԳԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ

#### Վահան Բահարեան

(Յուլիս 12, 2013-BOUWARDIA RESTAURANT, 137 S. GLENOAKS BLVD, BURBANK, CA 91502)

Ուրուրոգ Կարօ Դերձակեանի մօտ բուժուելուց չետոյ, ես շնորհակալութիւն յայտնեցի նրան, բայց զգում էի, որ դեռ «պարտք» եմ բժշկին: Երեւանում նրան նուիրուած մեծարանքի հանդիսութիւնը առիթ հանդիսացաւ իմ երախտագիտութիւնը յայտնելու նրան 2013 թ. Յունուարին գրածս ծաւալուն յղուածով՝ «Արժանի մեծարանք եւ գնահատանք»: Այն տպագրուեց ձեռքիս տակ ունեցած «Մասիս»-ում (Շաբաթ, Փետրուար 23, 2013), «Նոր Հայաստան»-ում (Հինգշաբթի, Մարտ 7, 2013), «Նոր օր»-ում (յապաւումներով) (Հինգշաբթի, Մարտ 14, 2013) եւ այլ թերթերում: Յօդուածը հոգու հանգստութիւն պարգևեց ինձ: Բժիշկը գոհ մնաց: Բժշկի մօտ բուժուողներին մի խումբ, ոգեւորուած բժշկին նուիրուած տողերից եւ բուժման ընթացքում նրա կողմից մեզ հանդէպ ցուցաբերուած հոգատարութիւնից ու մարդկային վերաբերմունքից, նրա պատուին կազմակերպեցինք յարգանքի երեկոյ, որն անցաւ բարձր մակարդակով: Երեկոյին սիրայօժար մասնակցեցին նաեւ բուժուողների որոշ ընկերներ՝ բոլորն էլ իրենց տիկիններով, ընդամենը 22 հոգի՝ Վահան Բահարեան, Աւետիս Բայրամեան, Շաւարշ Մելքոնով, Գրիգոր Գէորգեան, Վաղարշակ Վարդանեան, Գէ-



որդ Գէորգեան, Մելիք Պեանիլեան, Ժիրայր Պարսամեան, Աբրահամ Համամջեան, Յարութիւն Կարապետեան, Յովհաննէս Կօշկակարեան, Ծերուն Թաղեւոսեան, Սուրէն Կապլանջեան:  
Պրն. Դերձակեանը երեկոյին ներկայ էր իր տիկնոջ՝ Սիլվիայի և դստեր՝ Թալինի հետ: Նա ափսոսանք յայտնեց, որ տղան՝ Արամը ներկայ չէր, քաղաքից բացակայելու պատճառով:

Միջոցառմանը բժիշկին և նրա ազգային-հասարակական գործունէութիւնն ու բարեգործութիւնը ներկայացրեց տողերիս հեղինակը՝ շնորհաւորելով նրան իր ծննդեան օր-

Շաբ.ք էջ 18

**PEACE through MUSIC**  
Ending Hate • Giving Hope • Bringing Joy

The Pasadena Human Relations Commission presents:

**A Benefit Concert**  
Celebrating the 50th Anniversary of the Commission

**November 9, 2013**  
Saturday, 7:30 pm

**At the First Church of the Nazarene of Pasadena**  
3700 E. Sierra Madre Boulevard, Pasadena, California 91107

YIN YIN HUANG Concert Pianist  
DR. SVETLANA OGANESIAN Violist  
ALLISONNE CRAWFORD Violist  
VICTORIA GU Bakerist  
SERENA WANG Pianist  
SARAH LIU Pianist  
ALICE PIRO Flutist  
VAHE HAYRIKYAN Cellist  
MATTHEW TSO Pianist

Tickets \$20 at the door or by phone  
Contact: Nat Nehdar at (626) 351-8680; Human Relations Commission (626) 744-4234;  
Soji Kaishwaji at (626) 840-8131  
Proceeds benefit special programs of the Human Relations Commission.

## ԱՍՏՂԻԿԻ ՈՒ ՎԱՀԱԳՆԻ ԱՍՈՒՍՆՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՊԱՏԱՐԱԳ

Կարծես ծնած բլլայիր նոր՝ ծովէն գէջ,  
Կարծես վիհիկ լոյս կաթիլներ աղի  
Դեռ կը շողային այտերուդ գոյգ փոսից մէջ:

Ով դու Վահագն, ով աստուածն իմ հայրերուս,  
Կը մօտեցնամ ահա քաղցնիդ, եւ ինձ հետ  
Իր պախուրճէն փաշտով  
Կը բերեմ ցուլ մը հովիտներէն Տարօնի:  
Աստուածային գինովութեամբ մը գուարթ՝  
Այս օրերուն քու ժողովուրդիդ հետ կրօնափոխ:

Դանիէլ Վարուժան

### ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿԼԱԳԻՍԵԱՆ

Առաւօտ, Արմին-Հայ նախնիների Արեւ աստուած Միհրըն էր Արարատի ձիւնոտ գագաթին: Արմին-Հայերը հաւատացել էին, որ Միհրըն արեւը որպէս ջահ վեր պահած, տիեզերական հեռուներից իրենց Սրբազան Լեոնաշխարհ եկել, որ այնտեղ մշտնջենական լոյս վարարէր, ջերմութիւն հոսէր, բարիք ծնուէր, դրախտիկ երկրում լոյս տեղար: Աշտիշատի քուրմերը, տաղերգերի արարողութիւններով ողջունել էին Միհրին, նրա լոյսով երեսները ցօղել, ափերով լոյս քաղել, այն սիրել մեհեանի հրապարակի ու նրա շուրջ-բոլորը հաւաքուած մարդկանց վրայ:

Միջօրէ, Արմին-Հայերի արեւ աստուած Միհրըն, իր երկար ճանապարհին հասել Աշտիշատ, կապուտ ցօղել երկնակամարին, հեռու լեռների գագաթներին կրակ վառել, լոյսի անձրեւ տեղացել մեհեանի վրայ: Աշտիշատի մեհեանում ամուսնութեան հանդէսի, տօնախմբութիւն էր լինելու: Ինչքն էլ եկել Աշտիշատ, մասնակցելու Աստղիկի ու Վահագնի հարսանեաց հանդէսի պատարագին: Վահագնին փեսեղբայրութիւն պիտի անէր:

Մեհեանական ծիրանի հանդերձով Աշտիշատի Վահագնի քրմապետը, մեհեանի դարպասի շէմին կանգնել, բարձրաձայն կանչել. «Միջօրէ, արեւ աստուած Միհրըն ժամանել է մեհեանի կապուտակ երկնակամար, մասնակցելու Աստղիկի ու Վահագնի հարսանեաց հանդէսին: Արեւ աստուած Միհրըն կրակալոյս ճառագայթներից հիւսած նարոտով նրանց սիրոյ ուխտը յաւերժացնելու, որ Արա-Նուարդի նման հարս ու փեսայ մարդացած ամուսիններ լինէին, ոչ միայն երկիր մոլորակը, այլ նաեւ եթէ ամբողջ տիեզերքն էլ նուիրաբերէին դարձեալ իրարու հաւատարիմ մնային: Հայոս աստուածներն են լինելու իրենց հաւատարմութեան ուխտի վկաները»:

Իրարանցում էր մեհեանի հրապարակում, շուրջ բոլորը ալեծուփ ժողովուրդ: Որդան կարմիր հանդերձով Արմինա երկրի Արամէ արքան, Արատտա երկրի արքաների արեւի սկաւառակով թագը գլխին, բեհեգեայ երկար հագուստով թագուհուն թեւանցուկ արած, արքայական շքախումբի հետ բարձրանում մեհեան: Նրանց հետեւում են քսան եօթ Բիախնաների համադաշնութեան տիրակալների շքախմբերը: Նրանց թագերից, ծիածան հանդերձներից, գէնքերից անդրադարձած հազար գոյների լոյսը, հրաշարփի հեղեղ է տեղում մեհեանի կրակ վէմերով որմերին: Աշխարհական ժողովուրդն էր հետեւում նրանց:

Թագուհուն թեւանցուկ արած Արմինա երկրի Արամ-Արամէ արքան, մայր ոստան Թէյէբանիի հովիտների արօտներից բերած պարարտ ցուլի պախուրճէն բռնած մտնում մեհեանի Վահագնի ու Աստ-

ղիկի սենեակ: Քրմապետը, նրանց բազինի առաջ ցուլն է նահատակում, արքան ու թագուհին նրա պարանոցից հեղուած արիւնը ափերով շաղ տալիս Աստղիկի ու Վահագնի բազիններին, այն շիթ առ շիթ հոսում նրանց իրաններից, որպէս սիրոյ ու յաղթանակի կարմիր կրակ լոյսի հրավառութիւն: Բիախնաների իշխանները, Աստղիկի իրանից գեղած արիւնով օծում թագուհիներին, աշխարհական ժողովուրդը իրենց ճակատներին լոյս շողացող արեւի նշան դրոշմում: Իշխաններին ուղեկցող շինականները, տերեւների տակ ծիածան գոյններով առկայծող կանաչ ոստեր են տեղում Աստղիկի ու Վահագնի բազինների առաջ, որ տիեզերական աստուածների կրակի բոցը հոսէր մեհեանում:

Այրարատի Արատտա երկրի Մեծամորի իշխանը, թագուհու իրանը գրկած, իրենց հետ քայլող երկու քրմուհիներ՝ Արատտայի իմաստունների պատրաստած «Վահագնի Յարդազողի ճանապարհ»-ին վառուող լուսաստունների մագաղաթեայ քարտէսը վեր պահած, գնում մեհեան: Վահագնի քրմապետը իշխանի հետ մտնում մեհեան, այն ամբացնում մուտքի պատին: Մագաղաթի վրայ, երկիր մոլորակի ուղեծրից այն կողմը, կրակ գոյնով խոշոր աստղից ճառագած լոյսի ստուերները հիացմունք են պատճառել իրեն: Գովաբանել է Արատտայի իմաստունների երեւակալութեան ճախրանքը, որ հասել են իրենց տիեզերական աստուածների տաճարներ, երկնակամարի լուսաստունների ուղեցոյցը պարզեւել մարդկանց: Այդ այն աստղն էր, որ հազար-հազար տարիներ յետոյ նորէն պիտի անցնէր իրենց երկնակամարով, հայոց աստուածների մեհեանների Արմին քուրմեր նրա երթի ընթացքին պիտի հետեւէին, շատ հեռու երկրի իմաստունների մարգարէութեան իրականացմանը ակնատես պիտի լինէին:

Արմանի երկրի թագաւորը, յաղթ բազուկների վրայ թագուհին պահած գնում մեհեան, իրեն հետեւող շինականները ցորեանի խուրձեր գրկած, այգիներում հասունացած մրգերով լիքը կթոցներ ուսերնին, թագաւորի ու թագուհու հետ խորիտ քայլերով մտնում մեհեան: Թագուհին ու թագաւորը աստուածների անդրիներին հպում, որ արու գաւակներ պարզեւէին իրենց գահին: Շինականները, իրենց բերքի երախայրիքն են լցնում աստուածների բազինների առաջ, այնքան լցնում, որ նրանց անդրիներն էին բոցանում: Միածանի հազար գոյներով շողում էին բազինները, լոյսի անձրեւ էր իջել նրանց վրայ:

Սուբարտու երկրի թագաւորը, թագուհին իրենց ձեռքերի մատնները իրար ազուցած գահակին բազմած, նրանց հետեւող շինականները իրենց բարձրագիւր անասունների սաղարթներից հաւաքած հեղուկ մանանջով լիքը կուժերը ուսերնին

մտնում մեհեան: Կուժերն են դնում աստուածների բազինների առաջ, իրենց լեռնաշխարհում աստուածների արարած քաղցր մանանան բաշխէին քուրմ-քրմուհիներին:

Արմինա աշխարհի համադաշնութեան քսանեօթ իշխանները, թշնամու դէմ մղուած յաղթական կռիւների ծիածան գոյնի դրօշները տանում մեհեան: Դրօշները պիտի նուիրէին իրենց պատերազմի ու յաղթութեան աստուած Վահագնի բազինին, որ քաջութեան ոգի տեղար իրենց սրտերին, Արմինա երկրի մարդկանց հոգիներին պատերազմի յաղթական ոգու յորդ անձրեւ տեղար:

Արմինա երկրի Նախրեան գահատոհմի արքան, շինականների վերամբարձ գահակի վրայ բազմած թագուհու հետ գնում մեհեան: Տուշպա ծովը եզրերով հրաբուխների խառնարաններից քաղած կրակով լիքը ատրուշանը վեր պահած՝ նրանց է ուղեկցում թագադիր իշխանը: Արքան մտնում մեհեան, ընդունում հանդիսակարգային արարողութեամբ այն դնում կրակի ու լոյսի աստուած Արայի բազինի առաջ: Վահագնի քրմապետը, արքան, թագուհին, իշխանը հեթանոսական անուշ երգերի տաղերով փառաբանում ատրուշանում բոցավառուող կրակը, այն իրենց երկրին լոյս, ջերմութիւն էր պարգեւում:


Լեոնաշխարհի Հայաստ երկրի թագաւորը, թագուհին լանջին սեղմած մտնում մեհեան: Նագաճեմ քայլքով շինական պարմանուհիները, գինու կուժերն ուսերնին, հետեւում նրանց: Մեհեանի Վահագնի ու Աստղիկի սենեակ, կուժերով կարմիր արիւն գինի հոսում նրանց բազիններին: Թագաւորն ու թագուհին նրանց իրաններից հոսած

գինին ըմպում, որ թագուհին աստղիկի հմայքով օծուէր, թագաւորի սրտին Վահագնի արիւթեան ոգին իջնէր: Շինական պարմանուհիները գինի են հոսում մեհեանի բոլոր աստուածների բազիններին: Գինին, վտակների նման հոսում է մեհեանի դարպասներից, նրա դիմաց հաւաքուած մարդիկ ափերով վերցնում, ըմպում, երեսները ցօղում, որ աստուածների տիեզերական իմաստութեան ոգու լոյսը իրենց հոգիների տաճարների ջահերը վառէր, երգիչների, քերթողների հոգիներին տաղեր յօրինելու երեւակալութեան ճախրանքի հեղեղ վարարէր:


Վահագնի քրմապետն է ելել մեհեանի հարթակ, կանչում, որ ահա Աստղիկն ու Վահագնը իրենց բնակավայր Արարատի գագաթից ժամանելու են Աշտիշատ, իրենց հարսանեական հանդէսի պատկառութեան պատարագի խրախճանքի տօնախմբութեանը մասնակցելու: Հայոց Լեոնաշխարհի արքաներ, քրմապետ թագաւորներ, իշխաններ, նրանց հետ ժամանած աշխարհական ժողովուրդը ուրախ բացականչութիւններով կանչում են, որ Աստղիկն ու Վահագնը Միհրի լոյսի ճառագայթներին յենած ճախրում երկնքում, գալիս դէպի Աշտիշատ: Բացում է մեհեանի հրապարակը, Վահագնը Աստղիկին գրկած, հազար-հազար գոյնի ձնծաղիկների փունջը ձեռքին, իջնում մեհեանի հրապարակ: Վահագնի քրմապետը, քրմուհիների դասի քաղցր տաղերով, նրանց առաջնորդում մեհեան՝ նրանց համար առանձին պատած սենեակ: Քրմուհիներն են Աստղիկին շրջապատել, իրենց աշխարհի հարսանեական երգերն հնչում, արեւի շողերից հիւսած

Մար.ք էջ 19

Թ Օ Ղ Ո Ս Ա Ր Մ Ե Ն Ա Կ Լ Ա Գ Ի Ս Ե Ա Ն



**Քրեսենթա Հովիտի**  
Հայաստանեայց Առաքելական  
Սուրբ Եկեղեցւոյ  
Կազմակերպութեամբ  
Եւ  
Հովանաորութեամբ  
**Պ. երշ. Տ. Յովնան Արք. Տէրտերեանի**  
Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի



Անուամակոչութեան Պաշտօնական Հանդիսութիւն  
Եւ  
Յուշարարի Օրհնութիւն

Բազմավաստակ Կրթական Մշակի Անուան  
**«ԵՐՈՒԱՆԳ ՊԱՊԱՅԵԱՆ ՇԱԲԱԹՕՐԵԱՅ ԳՊՐՈՅ»**

Յաւարտ Սուրբ Պատարագի  
Հանդիսութիւն, Յուշարարի Օրհնութիւն,  
Ելոյթ՝ Շարաքօրեայ Դպրոցի Աշակերտներուն Կողմէ  
Հիւրասիրութիւն

ԿԻՐԱԿԻ, ՆՈՅԵՄԲԵՐ 17, 2013  
Armenian Apostolic Church, Crescenta Valley  
10154 Mountair Aveune, Tujunga, CA 91042  
ՄԻՐԱԼԻՐ ՀՐԱՒԵՐ

### ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ ՍԻՐՏԸ

#### ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՁԵԱՆ

Ընթերցողի սեղանին է դրուած յոյժ բովանդակալից եւ հետաքրքրական գիրք մը՝ ՎԱՀԷ-ՎԱՀԵԱՆԻ «ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ ՍԻՐՏԸ», որ կը պարփակէ՝ բանաստեղծ, իմբաստան, կրթական մշակ եւ ազգային հասարակական գործիչ Վահէ-Վահեանի նամակներն: Հատոր մը որ լոյս է տեսած իմբաստանութեամբ եւ ծանօթագրութեամբ հայ գիր ու գիրքի անխոնջ մշակ Արամ Սեփեթեանի, Սիփան Հրատարակչատունէն, 2012-ին եւ բաղձանքովը հանգուցեալ հեղինակին, որ իր մօտ գտնուող նամակներու ծրարը յանձնէր էր որդիին՝ ճարտարապետ Յոյակ Ապտալեանին, առ ի հրատարակութիւն իր շիջումէն ետք: Նամակագրութիւնը՝ մեր գրականութեան ներս եւ առհասարակ, նոր տարածքով կը հարստացնէ նամակագրին ներառարհի բացառապետը: Անիկա անկեղծ հարորդակցութիւն է, գերազանցօրէն, մտերիմ գրոյց, խոհի եւ յոյզի խոստովանանք, որոնք Վահէ Վահեան (1980, Պէյրութ) անմիջականօրէն կը բխին հեղինակին ներաշխարհէն, առանց հպտմին՝ ներքին իմբաստան, որ հաւանաբար անոնցմէ պիտի զեղչէր բառեր ու տողեր, հրապարակումի «անյարմար» թրուացող կամ դատուող...: Իսկ երբ նամակներին հեղինակը բանաստեղծ հոգի մըն է գգալին՝ տառապանքի դժոխքէն անցած, չետեղեռնեան Սփիւռքի գրական-կրթական-մշակութային-հասարակական կեանքի վկան ու ամբողջանուէր մասնակիցը, այն ատեն այդ նամակագրութեան հրատարակութիւնը կը դառնայ նաեւ ու յատկապէս վարակարական արժէք ներկայացնող հատորի մը լոյս ընծայումը, մեր պատմութեան մէկ փոթորկալոյց շրջանի խոր ապրուած փորձառութեան մը արձագանգը...:

Վահէ-Վահեանի հրապարակուած նամակներէն քիչեր միայն ունին ներանձնական բնոյթ, ուղղուած սիրուած էակներու, ընտանեկան անդամներու թէ մտերիմներու: Մեծաւ մասամբ, անոնք ուղղուած են իր ժամանակի գրական, հասարակական, հայրենի կարկառուն դէմքերու եւ կը շօշափեն գրական-գեղարտական ինդիւիդներ, այլեւ՝ մեր ժողովուրդն ու հայրենիքը յուզող խոռվածներն ու տագնապները, ազգային-հասարակական դրական թէ ժխտական երեւոյթները, որոնք միասնաբար կը հիւսեն մեր պատմութեան արդի ժամանակաշրջանի տարեգրութիւնը: Այդ բոլորին մէջ, կը ցցուի պատկառազու հասակն ու անհատականութիւնը ՎԱՀԷ-ՎԱՀԵԱՆԻ՝ խորապէս սկզբունքային ու գաղափարապաշտ, գորաւոր համոզումներու տէր, բծախնդիր ու խղճամիտ, արի ու սոսկուն...ամբողջանուէր կամաւորագրեալը հայ գիր ու գրականութեան, ազգին ու հայրենիքին...:

Տարագրութեան գեհնէն անցած բանաստեղծը՝ իր նամակներուն մէջ, մշտապէս պիտի մնար հալածանքին տակ՝ իր ենթագիտակցութիւնը խոռվող աքսորի պատկերներուն եւ սարսափի վերապրումներուն: Լիւսի Փոթուքեանին (Ջարիֆեան) ուղղուած նամակին մէջ, բանաստեղծը կը գրէ այն քան յատկանշականօրէն. «Միտքս կ'երթայ նորէն իմ մանկութեանս, աքսորի ճամբուն: Մասագործի դանակէն սկսեալ մինչեւ

մանգաղով, կացինով ու հրագէնի տեսակներով գինուած խուժանը իջաւ մեր վրայ սեւ ամպի պէս, մարմնացեալ մղձաւանջի՝ նման, երկու կողմերն ի վար խոր ու երկար այն կիրճին, ուր իրարու սեղմուեր, անշարժացեր էինք մենք, բազմութիւն մը՝ հագար հինգ հարիւրէ աւելի կիներու եւ մանուկներու: Գունափոխուեցաւ մէկէն ամէն բան: Ծուխի եւ արիւնի խառնուրդ մը պղտորեց մեր աչքերը, ու սարսափը տուաւ տարօրինակ զգացութիւն մը մեզի: Սկզբնական գոռում-գոչումին յաջորդեց պապանձում մը կատարեալ: ...Մնացինք մենք շշմած՝ մեր մեռելներուն առջեւ, վիրաւորեալներուն խուլ հառաչանքին դիմաց, թշուառ ցուցադրութեամբ մը կիսամերկ մարմիններու...: Այնուհետեւ, վերապրողներուս բաժինը եղան՝ լա՛նցը անօթութեան ու ցաւի, ստորնացրու՛մը նախատինքի, ներքին ճանկուտուքը անարգելի վերջիչումներուն ու տեսակ մը վրէժինդի կիրք՝ ապրելու, տեւելու եւ փոխհատուցման...»:

Ապրելու եւ տեւելու այդ վրէժինդութեան ամէնէն ազնիւ արտայայտութիւնը Վահէ-Վահեան գուցէ գտաւ գրելու, ստեղծագործելու իր տենդին մէջ...: Նշան Պէշիկթաշլեանին գրած իր նամակին մէջ, դիպուկ են իր խօսքերը մեր լեզուին մասին, որուն նուիրուեցաւ ան իր գրականութեամբ, ուսուցչութեամբ եւ «Անի» գրական հանդէսի իմբաստանութեամբ: «Մեր հարստութեան վերջին լուծման է մեր լեզուն: Եթէ կորսնցնենք նաեւ այդ մնացածը, մեզի կը մնայ գերեզման փնտրել մեր անանկ գոյութեան համար»:

Յանուն հայ լեզուին ու հայ գիրին, գաղափարին ու գեղեցկութեան համար մղուած անհատնում եւ հոգեկոտիչ ճիգ էր «Անի» ամսագրի իմբաստանը՝ շուրջ տասը տարի անընդմէջ: Հոսանքին դէմ թիպարելու սպառում մը՝ արտասահմանեան մեր պայմաններուն մէջ: «Պէտք է որ աշխատինք եւ տանք սրտազին, հոգիով», կը գրէ ան Հրաչ Ջարդարեանին հասցէագրուած նամակին մէջ. «Քիչ անգամ մեր ժողովուրդը պէտք ունեցած է իմացական առողջ մտնողի՝ ա՛յնքան անհրաժեշտաբար որքան ներկայիս: ...Դուք կոչուած էք ազգին ու մարդկութեան ձեր պարտքը հատուցանելու՝ գեղարուեստական գրականութեան ուղիով...»: Իր ծրագրին էր, արգարեւ, արտասահմանի լաւագոյն գրական ուժերը համախմբել «Անի»ի մէջ: «Պէտք է որ Սփիւռքային գրականութիւնը ստանայ յատկապէս դիմագիծ, միակ եւ ընդհանուր հայ գրականութեան մը երջանիկ իրականացումն առաջ, որպէսզի վերջին արդիւնքին մէջ կարենայ ունենալ իր բարենպաստ դերը», կը գրէ ան Պետրոս Ջարոյեանին, կոչ ընելով միաժամանակ որ աշխատանք տարուէր որ գրական այս շարժումին իրենց աշխատակցութիւնը բերէին բոլոր անոնք, որ ունէին գրական շնորհ եւ գաղափարական նուիրում: Գրական-գեղարուեստական երկի մը բուն արժեքափառ Վահեան պիտի փնտռէր գերազանցօրէն՝ մարդու ներաշխարհէն ներս, ցարդ չայցելուած խորութիւններ խուզարկելու միտող անոր բերած թափանցամիտ հայեացքին մէջ:

Առօրեային բռնակալութիւնը, սակայն կը կլանէր գինք, քանզի

Վահէ-Վահեան էր նաեւ կրթական տիպար մշակ՝ կոչումով, պատրաստութեամբ, իտէլով ու նուիրումով:

Բենիամին Նուրիկեանին ուղղուած իր նամակին մէջ, ան կը գրէ սրտացաւօրէն. «Առօրեան է որ կը կլանէ գիտ: Դասաւանդութիւն, դպրոցական անհամար տետրակներու սրբագրութիւն եւ չետոյ «Անի»ն, մինակ անօգնական»: Կային անհամար դժուարութիւններ՝ ամսագրին նիւթականի ապահովումը, աշխատակիցներ գտնելու, ամսագիրը տարածելու գործը: Ի գուր չէ, որ իմբաստանը իր աշխատանքին մասին անդրադառնալով, ան պիտի ըսէր, թէ անիկա «անընդհատ ու կաթիլ-կաթիլ սպառում» էր:

Տակաւ պիտի սրտնեղէր բանաստեղծը ի տես Սփիւռքի մեր գրողներուն մօտ հաւատքի ու խանդավառութեան պակասին՝ հայ գիր ու գիրքին նկատմամբ: Ան սրտագին կ'աւանդէ.

«Զիս մոռցան ու բոլորովին մինակ թողուցին գրիչի ու գաղափարի այն եղբայրներս մանաւանդ՝ որոնց օժանդակութեան, գործակցութեան վրայ հաշուած էի ես, երբ յանձն կ'առնէի ամսագիր մը հրատարակելու տաժանքը», Հրաչ Ջարդարեանին գրուած նամակին մէջ:

«Բանաստեղծին Սիրտը» հատորին կողքի շապիկը Վահէ-Վահեանի միւթարանքի ու ներշնչման գերագոյն աղբիւրը պիտի ըլլար վերածնունտ հայրենիքը: Յատկանշական են նամակի մը հետեւեալ տողերը՝ «Մեր միւթարութիւնն ու փա՛նքը կը մնայ նորէն՝ ապրող, ամէն օր քիչ մը աւելի գորացող ու գեղեցկացող մեր հայրենիքը, որ թէ՛ չէ տակաւին լիալիր վարձք մեր դարաւոր եւ արիւնոտ մաքառումին, միա՛կ դարբնոցն է սակայն, ուր կը ջրեղուի պողպատը մեր իրաւապահանջ կամքին»:

Տակաւին, ինչպէս յայտնի կը դառնայ իր նամակներէն, Վահէ-Վահեանի գործունէութիւնը չսահմանափակուեցաւ իր իմբաստանական, ստեղծագործական եւ կրթական աշխատանքներով միայն, ան հայ մամուլին մէջ եւս բերաւ իր քաղաքացիական սկզբունքային կեցողութիւնը, ինչպէս նաեւ՝ արտասահմանեան գաղութներու, թէ հայրենական բեմերէն հրապարակային խօսք արտասանեց հայ կեանքը յուզող գրական-հասարակական-ազգային հարցերուն շուրջ, փնտրուած բանախօս որպէս, որուն ծանրակշիռ խօսքը լուսարձակ ուղեցոյց եղաւ հայ տարագիր բազմութիւններուն համար մասնաւորապէս:

Իր նամակները կը վկայեն որ անոր կեանքը հիւսուեցաւ հայ կեանքի չետեղեռնեան կարեւորագոյն իրարարձութեանց հետ: Սփիւռքեան կեանքի կազմակերպում՝ դպրոց, մամուլ, գրականութիւն, միութեանական-քաղաքական կեանք, հայրենադարձ շարժում, Սփիւռք-Հայաստան կապերու մերձեցում եւ ամրապնդում, Մեծ Եղեռնի Յիսուսամեակ, Լիբանանի քաղաքացիական կռիւներ, անդրադարձ անոնց Մերձաւոր Արեւելքի գաղութներու ճակատագրին...Հայաստանի անկախացում: Այս բոլորը անցան իր գգալին ներաշխարհի պրիսմակէն՝ իր

միտքն ու հոգին, իր կեանքը դարձնելով սրբազան այրում ի սէր գաղափարի ու գեղեցկութեան, յանուն մեր ժողովուրդի ու հայրենիքի անխաթար ու անխանգար վերապրումին...:

Իր կեանքի վերջալույսին գրուած նամակներուն մէջ, Վահեան սրտագին կոչ կ'ընէ առաջը առնելու խօլամիտ այն անզգամութեան, որ կ'աճապարէ դամբանական կարգալ Մերձաւոր Արեւելքի հայութեան վրայ: «Մերձաւոր Արեւելքի հայկական գաղութները, ունենալով Պէյրութը իբրեւ կեղծոն, եղած են, կը մնան ու վաղն ալ պիտի ըլլան ողնասիւնը սփիւռքահայութեան, աղբիւրը՝ անոր բարոյական ու մտաւոր ուժերուն, հայթայթիչը՝ գոյատեւման պայքարի մարտիկներուն...», կը գրէ ան Սմբատ Տէրունեանին յղած իր նամակին մէջ: Զուգահեռաբար, դառնօրէն կ'ափսոսայ ան շուկայիկ մտածելակերպին տիրապետումը՝ իր գաղափարական հուլիանք յատկանշուող Բարեգործականի որոշ շրջանակներէն ներս եւ կ'ահագանգէ Անդրանիկ Փոլատեանին գրուած իր նամակին մէջ. «Հ.Բ.Լ.Մ.-ը, իր վարչական դրութեան մէջ, կը կարօտի հիմնական վերափոխութեան: Այլապէս՝ հեռու չէ անկանգնելի փլուզումը անոր»: Նոյնքան տագնապալից է իր ձայնը Ալեք Մանուկեանին գրուած նամակին մէջ՝ «Ալեք Մանուկեան Մշակութային կեղծոն»ին վաճառման ի լուր. «Պէտք չէ՛ որ վաճառուի Ալեք Մանուկեան Մշակութային կեղծոնին շէնքը, լիբանանահայութեան հետ նաեւ ամբողջ Սփիւռքին ի շահ, ինչո՞ւ չէ՛ նաեւ մեր Հայրենիքին սիրոյն: Չայն պէտք չէ, որ ունենան անոնք, որ չեն սորված արժեւորել նիւթը՝ չափովը անոր տուած կամ տալիք հոգեւոր, բարոյական, մտաւոր արդիւնքին»: Ինչ կը վերաբերի Մեզգոնեան Կրթական Հաստատութեան մասին շրջան ընող ատենի գրոյցներուն, Վահէ-Վահեան դարձեալ՝ ցաւոտ սրտի այրումով կը գրէ Անդրանիկ

Տագնաբանին. «Կը լսեմ տխուր բաներ Մեզգոնեան Կրթական Հաստատութեան մէջ տիրող ներկայ կացութեան մասին, ու կ'այրի սիրտս իր ցաւէն: Մեր ամբողջ սփիւռքին մէջ, գրեթէ միակ կեղծոնն է ան, որ կրնայ դառնալ մարգարանը հայ հոգիի վաղուան պահակներուն»:

Նոյն ցաւատանջ ապրումով, Հայաստանի վերանկախացման վաղորդային, կը վրդովուի բանաստեղծը ի լուր մեր հայրենիքէն ներս պատասխանատու անձանց «ցնորամտութիւններուն»: «Ո՞ւր կ'ուզեն տանիլ մեր անտիրական ժողովուրդը, ո՞ճրայնօրէն թրքամէտ իրենց գառանցանքներով: Երրորդ Ուժի բացառման սկզբունքը, հրաւիր մըն է դէպի անդունդը վերջնական գահավիժումի», կը գրէ ան Արա Գալայճեանին 21 Հոկտ. 1990-ին:

Իր ներանձնական նամակներուն մէջ, ուղղուած իր ամէնէն սիրուած էակներուն, Վահէ-Վահեան կը բանայ իր անձնական մտերմագոյն կեանքի խորախորհուրդ ծալքերը, լսելի դարձնելով ընթերցողին՝ իր սրտի տրոփիւնը, շունչի հեւքը, հոգիի թրթիռն ու



### ԻՆՉՊԵՍՅԱՂԹԱՅԱՐԵԼ ԱՆՔՆՈՒԹԻՒՆԸ

Քուճի խանգարումները, կամ անքնութիւնը կ'ըլլան տարբեր տեսակի, բայց այսօր ամենատարածուածը ընկճախտի պատճառով խանգարումներն են: Եւ անիկա կրնայ շատ երկարատեւ ըլլալ, ու ժամապառ ընելով մարդը: Հնարաւոր է սորվիլ բնական քնանալ, եթէ կեանքի մէջ stress-ները շատ-շատ են:

Չղայնութիւնը, մանր ու մեծ տհաճ իրողարձուութիւնները կեանքի մէջ շատ են, եւ ամէն մէկը չէ, որ կը յաջողի այդ իրողարձուութիւններուն հանդիստ վերաբերիլ: Ընկճախտի համար «վնարուող դիրնը» տարբեր է, բայց մարդոց մեծ մասը անիկա կը սկսի քունի խանգարումներով կամ սովորական անքնութեամբ:

Ամէն մէկն ալ ժամանակ առ ժամանակ խնդիրներ կ'ունենայ քնանալու հետ, եւ ատիկա բացատրելի է, մենք կ'պարհիք ամէնօրեայ յոգեբով ու հոգեբանական ծանրաբեռնութիւններով լեցուն կեանքի կշիռով: Կը թուի, որ քան ծանրաբեռնութեամբ ըլլանք, այնքան լաւ պիտի քնանանք, քանի որ մարմինը հանգստանալու կարիք ունի: Բայց, որքան ալ տարօրինակ ըլլայ, ամէն ինչ ճիշդ հակառակը կ'ըլլայ. որքան մեծ է լարուածութիւնը, այնքան վատ կը քնանանք: Ամէն մէկը ունի իր խնդիրները. մէկը չի կրնար երկար ժամանակ քնանալ, միւսը կ'արթննայ գիշերուան կէսին կամ լուսադէմին ու այլեւս չի կրնար քնանալ: Եւ այդ տհաճ շրջանը քանդելը շատ դժուար է. ընկճախտը չի ձգեր քնանալ, վատ քնանալու պատճառով ալ մարմինը չի կրնար յարթաւարել ընկճախտը: Պատճառը հասկանալի է, բայց ի՞նչ ընել:

Պէտք է սորվիլ պայքարիլ ոչ թէ անքնութեան դէմ, այլ՝ սեփական տաղանդայնութեան ու անհանգստութեան:

Սովորութիւն դարձուցէք, իբրեւ կանոն, քնանալէն երկու ժամ առաջ մէկ կողմ դնել բոլոր խնդիրները: Դուք ձեզի արդիւնքէք վերջիչել օրուան իրողարձուութիւնները, մտածել խնդիրները հարթելու մասին: Ատիկա ձգեցէք վաղուան, թարմ գլուխով մտածելու համար: Դիւրին է նման խորհուրդներ տալը, բայց ինչպէս հետեւիլ անոնց՝ փուլ առ փուլ: Իտէլական տարբերակ է քունէն առաջ գոնէ կէս ժամ գրոսիլը:

Կ'օգնէ նաեւ ճիշդ լիցքաթափուելը: Անիկա կարելի է սկսիլ տաք ցնցուղով, կամ ոտքերու համար

տաք լոգանքով՝ հաշուի առնելով, որ ջուրը հիանալի կը վերացնէ լարուածութիւնը: Որոշ մարդկանց կրնայ օգնել ընթերցանութիւնը կամ հեռադիտելի ցած ձայնով հաղորդումը: Միւսներուն, ընդհակառակը, ննջարանին մէջ մթութիւնն ու լիակատար լռութիւնը:

Ընդհանրապէս հաշուի առէք, որքան քիչ ժամանակ անցընէք անկողնի մէջ, այնքան արագ քուն կը մտնէք: Եւ ընդհակառակը, որքան երկար սպասէք, որ քնանաք, այդքան կը դժուարանայ անիկա: Քուճի խանգարումները, իբրեւ կանոն, կապուած են բարձր տաղանդայնութեան եւ յուզական գրգռուածութեան հետ, որ հագուածէք կարիք կը զգայ յատուկ բուժման: Դրութիւնը առաւել լուրջ է, եթէ մարդը կը քնանայ տաղանդով եւ կ'արթննայ շատ կանուխ (ժամը 4-5-ին) եւ այլեւս չի կրնար քնանալ: Ատիկա կրնայ նոր սկիզբ առնող ընկճախտի արտաշնչանքէն մէկը ըլլալ, այդ պատճառով ալ պէտք է դիմել ջիղերու մասնագէտի:

Խորհուրդ կը տրուի հանգստեան օրերուն չքնանալ շատ երկար ու անկողնիէն ելլել միւս օրերուն նման, որպէսզի չխախտի մարմնի կենսառիթմը:

Ննջարանէն հանել այն իրերը, որոնք կը չիջեցնեն աշխատանքը, գրասեղանը, համակարգիչը, հեռաձայնը եւ այլն: Անոնք կը չիջեցնեն հոգեբու մասին եւ կը նպաստեն անքնութեան:

Քնաբեր առնելու պարագային պէտք է չիչել չորս «ոչ»-ի մասին.

Չբարձրացնել բժիշկի նշանակած քանակը, եթէ նշանակուածը չ'ազդեր:

Քնաբեր դեղորայքի հետ միաժամանակ չօգտագործել ալքոհոլ, անոնց փոխազդեցութիւնը կրնայ քրոմայի եւ մահուան պատճառ դառնալ:

Քնաբեր դեղորայքը չօգտագործել չորս շաբաթ շարունակ: Դեղորայքի ընդունումը կտրուկ չզգոցնել, այլ աստիճանաբար իջեցնել անոնց քանակը, որպէսզի դեղորայքէն բաց թողնուի որակը չվատանայ:

Եթէ մարդը քունի խանգարումէ կը տառապի աւելի քան մէկ ամիս եւ ատիկա բացասաբար կ'անդրադառնայ ինքնագոգացողութեան վրայ, կը խանգարէ բնական նոս արթնացումը, ուստի անհրաժեշտ է հետեւիլ բուժման՝ դիմելով համապատասխան մասնագէտի:

### ԻՆՉՈՒՒ ԴԱՍԱՐ ԿԱՐԵՒՐ Է ԿԱՌԱՎԱՐԵԼ ԶԳԱՑՈՒՄՆԵՐԸ

Երբ մեր կիրքերն ու զգացումները ըլլան չափաւոր եւ տրամաբանական սահմաններու մէջ, հոգեպէս աւելի առողջ կ'ըլլանք, քան երբ անոնք դառնան սաստիկ ու չափազանց: Երբ կարենանք կառավարել մեր զգացումները, կրնանք դիւրութեամբ կառավարել նաեւ մեր կեանքը, որովհետեւ զգացումները կառավարելով մարդիկ կրնան նաեւ կառավարել իրենց հա-կազդեցութիւնները (reactions) եւ արարքները:

Մեր մշակուցի մէջ սովորական երեւոյթ է կեանքի պայմանները եւ դէպքերը վերագրել բախտի կամ ճակատագրի: Թէեւ բախտը կրնայ որոշ դեր մը ունենալ մեր կեանքին մէջ, սակայն մեր կեանքը մեծ մասամբ հետեւանքն է մեր սխալներուն եւ արդիւնքն է մեր ճիշդ որոշումներուն: Ազգատուութիւնը, դժբախտութիւնը, սոցիալութիւնը, յաջողութիւնը, առողջութիւնը եւ շատ մը այլ կեանքի պայմաններ կարելի է բոլորովին վերագրել բախտի, սակայն հոգեբանականօրէն վերլուծելով անոնք մեծ մասամբ ազդուած կ'ըլլան մեր ընթացքէն, որոշումներէն, արարքներէն:

Մարդիկ յաճախ բախտի կը վերագրեն իրենց կեանքը որպէսզի արդարացնեն իրենց կատարած սխալները եւ իրենց վրայէն վերցնեն իրենց կեանքը բարելաւելու պատասխանատուութիւնը: Բախտը կամ ճակատագիրը մեղադրելը կրնայ նաեւ նուազեցնել մարդոց յանցաւորի զգացումը: Այս բոլորը կրնան օգտակար դառնալ անձին կարճ ժամանակի համար, սակայն երկար ժամանակի մէջ անձը կը մղեն յուսախափութեան, ընկճուածութեան եւ չաւելեալ սխալներ գործելու: Երբ անձ մը սկսի իր սխալները ծածկել այլ սխալներով եւ գանոնք արդարացնել մեղադրելով իր բախտն ու ճակատագիրը, կեանքի դեկը բոլորովին դուրս կու

գայ անձին կառավարութիւնէն: Մարդոց մեծ մասը վերոյիշեալ միջոցին վրայ հիմնուելով կը բացատրէ իր կեանքի պայմանները: Զարմանալի չէ, որովհետեւ ինքզինք մեղադրելը եւ յանցանք ընդունելը շատ աւելի դժուար է քան բախտը մեղադրելը:

Մեր կեանքը կառավարելու ամէնէն պարզ գաղտնիքներէն մէկն է կառավարել մեր զգացումները: Եթէ կարենանք ազդեցութիւն ունենալ մեր զգացումներուն եւ կիրքերուն վրայ, կրնանք աւելի դիւրութեամբ բարելաւել մեր անձը եւ մեր կեանքի մակարդակը:

Զգացումները կառավարելու համար նախ պէտք է ընդունիլ գանոնք: Կարգ մը զգացումներ անհաճոյ են, հետեւաբար մարդիկ կը ժխտեն անոնց գոյութիւնը, սակայն կարելի չէ երկար ժամանակ մնալ այս կացութեան մէջ: Կարեւոր է, որ մարդիկ նախ անկեղծ ըլլան իրենց անձնական զգացումներուն նկատմամբ եւ ընդունին գանոնք, նոյնիսկ երբ այդ մէկը ցաւ պիտի պատճառէ իրենց:

Երբ անկեղծութեամբ ընդունինք մեր զգացումներու գոյութիւնը եւ անոնց ազդեցութիւնը մեր վրայ, կրնանք գանոնք վերլուծել եւ կարենալ ճիշդ ընթացքի մէջ դնել: Այս ձեւով կարելի է կանխարգիլել ջղային պոռթկումներ եւ այլ սխալ արարքներ, որոնք կրնան քանդիչ հետեւանքներ ունենալ թէ՛ մեր վրայ եւ թէ՛ մեր շրջապատին վրայ:

Ուղեղը իւրապատուկ կարողութիւն ունի ժամանակի ընթացքին կառուցողական աշխատանք որդեգրելու, որպէսզի մենք կարենանք յարմարիլ կացութիւններու հետ: Երբ ճիշդ ձեւով եւ լաւ մարզէք մեր ուղեղը կը ստանանք դրական արդիւնքներ եւ ընդհանրապէս հարցեր լուծելու գործընթացը եւ աշխատանքը կը դիւրանայ:

### ԻՆՉՊԵՍՅԱՂԱՑՆԵԼ ԱԶՔԵՐՈՒ ՏԱԿ ԳՈՅԱՑԱԾ ՊԱՐԿԵՐԸ

Աչքերու տակ գոյացած պարկերը կը կրեն յատկապէս ժառանգական բնոյթ, եւ բժշկութիւնը անգոր է անոնց դէմ պայքարելու հարցով: Բայց շատ յաճախ անոնց յառաջացման պատճառը ալքոհոլի շատ գործածութիւնը, անբաւարար քունը կամ արեան դանդաղ շրջանառութիւնն է:

Ըստ որոշ մասնագէտներու՝ պատճառը դէմքի այդ հատուածներուն վրայ ներմաշկային ճարպի բացակայութիւնն է: Անոր կրնայ նպաստել նաեւ շատ քրտնարտադրութիւնը եւ ուժգին յոգնածութիւնը: Ալքոհոլի շատ եւ յաճախակի օգտագործման պարագային մաշկի մէջ կը նուազի խոնավութեան մակարդակը: Իբրեւ արդիւնք՝ աչքերուն տակի բարակ եւ նուրբ մաշկը այնքան կը բարակնայ, որ նոյնիսկ նկատելի կը դառնան արեան մազանօթները:

Աչքերուն տակ գոյացած մուգ պարկերուն համար հանգստացնող հրաշալի միջոցներ են ազատքեղով եւ հում գետնախնձորով պատրաստուած դիմակները: Կրնաք պարզապէս գետնախնձորը մաքրել, լուակ, քերել, լեցնել ձերմակ կտորի վրայ եւ 15-20 վայրկեան կտտնել աչքերուն վրայ: Ազատքեղը լաւ լուաք, հիւթը քամել եւ նոյն ձեւով

առաւօտեան եւ երեկոյեան տեղադրել աչքերուն վրայ: Այս պարագային օգտակար են այն բոլոր միջոցները, որոնք կ'աշխուժացնեն արեան շրջանառութիւնը: Օրինակ՝ պաղ օղիով թրջոցները: Շատ յաճախ դէմքի մաշկի վրայ կը գոյանան շատ փոքրիկ կարմիր «աստղիկներ», անոնք մաշկի տակ գտնուող արեան մազանօթներն են, որոնք տարբեր պատճառներով կը լայնանան:

Մաշկի մէջ արեան լաւ մատակարարման պարագային բարձր կամ ցած ջերմաստիճանի առկայութեամբ մազանօթները կը լայնանան եւ կրկին կը նեղանան: Երբ այդ ընթացքը վատ կը կատարուի՝ կը խաթարուի, մազանօթները կը մնան լայնցած եւ մաշկի վրայ կը յառաջանան «աստղիկներ»:

Եթէ ձեր դէմքի մաշկը «աստղիկներ»-ու յառաջացման հակում ունի, ուրեմն խուսափեցէք այն բոլոր միջոցներէն, սուղորդ դիմակներէն, որ կրնան ուժեղ խթանել արեան շրջանառութիւնը՝ գերծանրաբեռնելով անօթներուն աշխատանքը: Յանկալի չեն օդի ջերմաստիճանի կտրուկ փոփոխութիւնները, արեւուն տակ երկար մնալը եւ շատ տաք ջուրը: Նաեւ խուսափեցէք ալքոհոլէն եւ կծու սնունդէն:

OFFICES FOR RENT IN PASADENA  
ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ  
1060 North Allen Ave Pasadena, CA 91104  
Գրասենեակները վերանորոգուած  
եւ յարմար վարձքերով  
Յետաքրքրուողներէն հեռաձայնել՝  
(626) 398-0506

Ձեր Ծանուցումները Վստահեցեք  
«Մասիս» Շաբաթաթերթին  
T: (626) 797-7680 F: (626) 797-6863  
Massis2@earthlink.net

# «Մասիս» Շարաթաթերթը Թեւակոխեց իր 33-րդ Տարին

# ՕԼԻԳԱՐԽՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

## Շարունակուած էջ 1-էն

Քիւնր աննշմար է, չըսելու համար՝ համարեա՛նք անգոյ է: Նիւթաթերթ մասնագիտութիւններու տիրացման հմայքը խորը էր եւ անգայլի:

Ս.Մ.Ն.Ի մեր մեծամեծ կրթական հաստատութիւններէն սկսեալ՝ վկայեալ մեր նոր սերունդը հագիւթէ կարեւնար, հայերէնով, կէս կատար արտայայտուիլ եւ իր լրացուցիչ նախադասութիւններն ալ փոխանցելով անգլերէնէն: Եթէ այդֆանն ալ կարեւնային պահել քանի մը տարի՝ փառք պիտի տայինք առոր համար... Ապացոյցները քաջաբերական չեն բոլոր ըլլալ, որովհետեւ, մեր ծնողներու մօտ, անգամ մեր կրթական հաստատութիւններէ ներս, համարեալ հետաքրքրութիւն չի կայ հայերէնի ու սուցչութեան եւ հայ մամուլի նկատմամբ:

Մարտահրաւերները քաջամարնոյթ եւ քաջակողմանի էին:

Հակառակ այդ բոլոր անպատեհութիւններուն, «Մասիս» մնաց պատմէջի վրայ լրիւ 33 տարի ու վնոած է մնալ վաղի ու միջոց, համահունչ՝ աշխարհով մէկ տարածուած հնչակեան մամուլի ազգանուէր, հայրենամուտը եւ պահանջատեր գաղափարահունչ առաքելութեան:

«Մասիս» շարաթաթերթը իր խօսքը եւ պատգամները լսելի դարձնելու համար նաեւ հայերէն լեզուի իմացութեան գործի հայնոր սերունդին՝ սովորաբար իր շարաթական համարի մէջ քացած անգլերէն բաժինէն անկախ, համացանցի վրայ հաստատեց էլէտրոնային «Մասիս Փոստ»ը, նպատակ ունենալով անգլերէն լեզուով ամենօրեայ լրատուութիւններ սփռելու միջոցով հայնոր սերունդը կապել մեր ազգի ամենօրեայ հիմնահարցերուն:

Անկախաբար իր դիմագրաւած քազում դժուարութիւններուն

«Մասիս» շարաթաթերթը որպէս ազգային, հայրենասիրական, քառաքան բարեգործական, մշակութային փնտռուած օրկան, ոչ միայն անվնար կը քաժնուի մեր բնօրէնալէր հայորդիներուն, այլ նաեւ, գիրքնիք իրազեկ կը դարձնէ ազգային ու միջազգային տազնապետիցից հիմնահարցերու մասին: Քառաքանականապէս կը լուսարանէ: Կ'ողմնորոշէ եւ կ'առաջնորդէ գիրքնիքէպի մեր ազգային հիմնահարցերու արդար լուծման սատար կարելի հանգրուաններուն:

«Մասիս» շարաթաթերթը իր այս վեհ առաքելութեան կառնած մնաց անխախտ եւ ամբողջական հաւատով: Ան կանթեղեց իր մէջ այն հաստատ համոզումը, թէ մեր ժողովուրդի առջեւ քրգացած՝ Թուրքիոյ կողմէ հայ ժողովուրդի դէմ իրագործուած ճեղասպանութեան նկատմամբ, բոնագրաւուած հողերու վերադարձման եւ հատուցման մեր հիմնահարցերը, ուշ կամ կանուխ պիտի գտնեն իրենց արդար լուծումը:

Նոյնպէս, «Մասիս» մշտապէս հետապնդեց ու միշտ պիտի հետապնդէ մեր ազգի հաւաքական այն հաւատամքը, որ հաստատապէս մեր հայրենիքը պիտի վերագտնէ իր գարգացման լուսաւոր, անաչառ եւ կառուցողական նշմարիտ նախապահը, որ գիրք պիտի առաջնորդէ դէպի ամբողջական ժողովրդավարութեամբ, անկաշառ արդարադատութեամբ եւ ոգեշնչող ազգային անկախելի միասնականութեամբ օժտուած հայրենիք, Հայաստան աշխարհ:

Այս համոզումով, «Մասիս» շարաթաթերթը, իր 33-րդ տարեդարձի քարեքաստիկ առիթով, կը վերանորոգէ իր յանձնառութիւնը շարունակելու իր սրբազան առաքելութիւնը՝ ի խնդիր առանձնապէս իր եւ բնահարապէս հայ մամուլի գոյութեան պահպանման եւ գորացման մեր ազգին եւ հայրենիքին:

## Շարունակուած էջ 2-էն

**Ունեցած իշխանութիւնը:**

Բոլոր երկրներում էլ այս խնդիրը, ըստ հոլթեան, առաջանում է: Ջարգացած երկրները դրա երկարաժամկէտ լուծման համար հանգել են իրաւաքաղաքացիական համակարգերի ստեղծմանը, զգալիօրէն տարանջատելով իշխանութեան եւ վերահսկողութեան գործառնիթները: Ըստ այդմ, խոշորները պայքարը կորցրել է կենացմահու ընդթը, այդպիսով առաւել արդիւնաւէտ դառնալով նաեւ հասարակութեան համար:

Հայաստանում սակայն, իշխանութիւնը կենացմահու ընդթը եւ տրամաբանութիւնից դուրս գալ անկարող է: Իսկ քանի որ անկարող է, ապա կենացմահու է

ստացուած արդէն ոչ միայն հասարակութեան հետ ցանկացած խնդիր, այլ նաեւ միմեանց միջեւ առկայ խնդիրները:

Հասարակութեան հետ յարաբերութեան հարցում կենացմահու տրամաբանութիւնից դուրս գալու հնարաւորութիւն իշխող համակարգն ունեցել է մի քանի անգամ, երբ հնարաւոր էր կատարել դէպի քաղաքացիաիրաւական համակարգ բերումը: Սակայն այդ հնարաւորութիւններն օգտագործուել են հակառակի՝ հասարակութեանը էլ աւելի ծաղր ու ծանակիլ, ցինիզմի ենթարկելու համար: Շատ մօտ ապագայում ժամանակն է պատրաստուում համակարգի հետ անել այն, ինչ համակարգը մինչ այժմ անում է հասարակութեան հետ:

«ԼՐԱԳԻՐ»

# ՆԱԽ՝ ԿԱՅԱՆԱԼ, ՅԵՏՈՅ՝ ՀԱՄԱՆԱՄՈՒԵԼ

## Շարունակուած էջ 2-էն

շինք կազմող կուսակցութիւններից իւրաքանչիւրը տիրապետում է այնպիսի ունեւորների, որոնք բացակայում են մնացածների մօտ: Սակայն ընդդիմադիր հանրութեան յաղթելուն նախ եւ առաջ «նպաստում է» դաշինքի անդամ սուբիեկտների կարողութիւնը, հասունութիւնը, պատրաստուածութիւնը եւ այլն: Անկարող, թոյլ սուբիեկտների համախմբումը, որքան էլ դրանք քանակը շատ լինի, չի առաջացնելու հզօր եւ կարող միաւորում: Ինչպէս հնարաւոր չէ, օրինակ, բազմաթիւ գաւառական, ցածրորակ կաշքերի խմբագրութիւնների միաւորումը ստեղծել բարձրակարգ մեդիակոնցեռն, այնպէս էլ հնարաւոր չէ թոյլ եւ անկարող կուսակցութիւնների միաւորումը ստեղծել յաղթող դա-

## շինք:

Նոյնը վերաբերում է ընտրական գործընթացներից դուրս մղուող որեւէ պայքարի: Մի քանի տասնեակ, բայց չկալացած ՀԿներ եւ քաղաքացիական նախաձեռնութիւններ կարող են միաւորուել, բայց չկարողանան նոյնիսկ փոքր խնդիր լուծել, մինչդեռ մէկ փոքրաթիւ, բայց կարող քաղաքացիական խումբ կարող է հասնել մեծ յաջողութիւնների: Պէտք է նաեւ նշել, որ եթէ պայքարող, բայց թոյլ քաղաքացիական սուբեկտներն ազնիւ մղումներ ունեն, ապա, ինչպէս ցոյց է տալիս սոցիալական շարժումների համաշխարհային փորձը, շատ կարճ ժամանակում նրանք կարող են դառնալ հզօր սուբեկտներ, իսկ այդպիսիների համախմբումը իսկապէս կարող է սարեք շարժել:

«ՀԵՏՔ»

# ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ ՍԻՐՏԸ

## Շարունակուած էջ 16-էն

նրբանուրբ մեղեդին, որոնք ընթերցողը կ'առնեն իր ներքին խորապրումներուն առթած ներշնչանքի կախարդանքին տակ...:

Եւ այսպէս, վահէ՛վահեան՝ բանաստեղծն ու խմբագիրը, կրթական մշակն ու ազգային հասարակական գործիչը, նամակ առ նամակ եւ սող առ սող կը բանայ իր սրտին ու մտքին գաղտնարանը, տեսանելի դարձնելով ի մասնաւորի իր խումբներն ու սուբկտները, երազներն ու տեսիլքը՝ աւելի քան վաթսուն տարիներու վրայ երկարող հայ կեանքի գրական-գեղարուեստական, մշակութային-կրթական, ազգային-հասարակական խնդիրներուն շուրջ... սիրտէ-սիրտ փոխանցող անկեղծութեամբ եւ հարազատութեամբ:

Նամականիին ընթերցումը, արեւմտահայերէնի անոր ողջ գեղեցկութեամբ ու անթերի մաքրութեամբ, հոգեմտաւոր խրախճանք է ...բանաստեղծի սրտին հետ հոգեյոզ հաղորդակցութիւն, որմէ դուրս կու գայ ընթերցողը առաւել հարստացած, ազնուացած ու հալացած...:

# ՈՒՐՈՐԿ ԿԱՐՕ ԴԵՐՁԱԿԵԱՆ

## Շարունակուած էջ 14-էն

ուայ առթիւ (Յուլիսի 12) և շնորհակալութիւն յայտնելով հիւանդների նկատմամբ իր հոգատարութեան, նուիրուած ու ցուցաբերած անսակարգ օգնութեան համար Հայրենիքին ու ազգին: Այնուհետեւ տրակիկ հայկական սեղանի կարգ ու կանոնով, ներկաները հանդէս եկան բաժակաճառերով, շնորհաւորեցին բոլորիւն ծննդեան օրուայ առթիւ, դրուատեցին նրա հայրենասիրական ու ազգային գործունէութիւնը հպարտանալով նրանով՝ որպէս հայկական և ամերիկեան շրջանակներում յայտնի լուսագոյն հայ ուրուողներից մէկի:

Երեկոյցի ջերմ մթնոլորտից յուզուած, նա իր շնորհակալութիւնն ու գոհունակութիւնը յայտնեց ներկաներին իր և ընտանիքի նկատմամբ ցուցաբերուած վերաբերմունքի, Հայրենիքին ծառայելու համար գնահատանքի, ինչպէս նաեւ վստահութեան համար, նրանց բուժելիս:

Կազմակերպիչները նրան նուիրեցին

ընդհին Նապոլիոն Բոնապարտի գեղեցիկ արձանը ձիու վրայ նստած՝ ձեռքին բռնած սուրը, քանդակին ամբացուած պիտակի վրայ գրուած նուիրատուների անուններով՝ Շաւարշ Մելքոնով, Գաբիկ Թամրագեան, Գրիգոր Գէորգեան, Վաղարշակ Վարդանեան, Վահան Բահարեան, Աւետիս Բայրամեան, Գէորգ Գէորգեան, Աբրահամ Համամշեան, Մելիք Պեանիլեան: Սա բուժուողների յուշանուէրն էր բժշկին:

Յարգելի ուրուողին մի անգամ եւս շնորհաւորում ենք ծննդեան տարեդարձի առթիւ, ցանկանում նրան ու ընտանիքին քաջաւորջութիւն ի բարօրութիւն մեր ազգի ու Հայրենիքի:

Երեկոյցից մի քանի օր անց պրն. Դերձակեանը հեռախօսով մի անգամ ևս շնորհակալութիւն յայտնեց երեկոյցի կազմակերպիչներին ու մասնակիցներին՝ իր ծննդեան տարեդարձը նշելու, շնորհաւորելու և իրեն պատուելու համար...:

Յարգանքի երեկոն յիշարժան յուշ մնաց մասնակիցների կեանքում:

**ՄԱՍԻՍ**  
ԱՍԵՆԱՎՍԱԳՆԵԼԻ ԱԴԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒԵՐՈՒ

**SEROP'S CAFE**  
**GREEK & LEBANESE FOOD**  
SERVING BATON ROUGE SINCE 1979

### ՆՈՒՐԱՏՈՒՌՈՒԹԻՒՆ

Ողբացեալ ՅՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՆՆԵՍԵԱՆԻ մահուան տխուր առիթով, փոխան ծաղկեպսակի կատարուեցան հետեւեալ նուիրատուութիւնները. «Բենիամին ժամկոչեան» Միջնակարգ Դպրոցին (Երեւան) եւ «Երկիր եւ Մշակոյթ» ընկերակցութեան (Լոս Անճելըս):

#### «ԲԵՆԻԱՄԻՆ ԺԱՄԿՈՉԵԱՆ» ԴԴՐՈՑԻՆ

Տիկին Սօսի Հաննէսեան եւ Ջաւահիր	\$500
Տէր եւ Տիկին Ռաֆֆի եւ Անժելա Գեւորեան	\$200
Տէր եւ Տիկին Յովհաննէս եւ Վիքթորիա Մանուկեան	\$200
Տէր եւ Տիկին Սարգիս եւ Սիլվա Քարայեան	\$200
Տէր եւ Տիկին Վիգէն եւ Լիւսի Կիւլվարդեան	\$150
Շիրակաչէն	\$100
YMCA Friends	\$100
Պր. Արա Գեւորեան	\$100
Տիկին Նօզմի Ապտէսեան եւ դուստրը	\$100
Տէր եւ Տիկին Բիւզանդ եւ Անահիտ Մէջմարեան	\$100
Տէր եւ Տիկին Ներսէս եւ Դանիա Պարտաքճեան	\$75
Տէր եւ Տիկին Սեդրէ եւ Մարի Արապեան	\$50
Տիկին Լուսին Պաքամճեան	\$50
Տիկին Լիա Էրնէքեան	\$50
Տէր եւ Տիկին Յակոբ եւ Երանուհի Կարապետեան	\$50
Տէր եւ Տիկին Հրանդ եւ Մանիշ Սիմոնեան	\$50
Տէր եւ Տիկին Հայկ եւ Մատչէն Արնէքեան	\$50
Տէր եւ Տիկին Սամուէլ եւ ժանէթ Իլէնճեան	\$50
Տէր եւ Տիկին Վահէ եւ Ռօզէթ էքմէքճեան	\$50
Պր. Ճիւլիան Կարապետեան	\$50
Տէր եւ Տիկին Յովհաննէս եւ Անահիտ Հապէշեան	\$50
Պր. Ալպերդ Միւսսեան	\$40
Տիկին Սիրվարդ Բանեան	\$30
Տիկին Արաքսի Ատալեան	\$30
Պր. Սարգիս Քառքարեան	\$30

#### «ԵՐԿԻՐ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ» ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ

Տիկին Սօսի Հաննէսեան եւ Ջաւահիր	\$500
Պր. Նազարէթ Գեւորեան	\$500
Տէր եւ Տիկին Ժան եւ Սօնա Մոմճեան	\$200
Շիրակաչէն	\$100
Տէր եւ Տիկին Յարութիւն եւ Անահիտ Փարթամեան	\$100
Տէր եւ Տիկին Մարինա Սօֆեան	\$100
Տէր եւ Տիկին Յակոբ եւ Սիրարփի Չաքալեան	\$100
Տէր եւ Տիկին Պետրոս Մարոնեան	\$100
Տէր եւ Տիկին Սիմոն եւ Արփի Սիմոնեան	\$100
Պր. Ալպերդ Միւսսեան	\$50

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՆՆԵՍԵԱՆԻ մահուան տխուր առիթով հանգուցեալի ընտանիքը եւ հարազատները իրենց խորին շնորհակալութիւնները կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, հեռաձայնելով, զրույթեամբ, կամ փոխան ծաղկեպսակի նուիրատուութեամբ մասնակից եղան իրենց սուգին:

## ԱՍՏՂԻԿԻ ՈՒ ՎԱՅԱԳՆԻ ԱՍՈՒՍՆՈՒԹԵԱՆ ԳԱՆՂԵՍԻ ՊԱՏԱՐԱԳ

Շաբաթակուած էջ 15-էն

կրակ գոյնըով զգեստ կապում իրանին: Հարսանեկան զուարթ երգեր, Աստղիկի շուրջ նազանի պարեր են բռնել:

Միջօրէ, Միհր աստուածը արեւակէզ ջահեր բարձր պահած, երկնակամարից իջնում Աշտիշատի մէհեան: Վահուանի քրմապետը, քուրմ-քրմուհիները Միհրին առաջնորդում Վահագնի սենեակ: Աշտիշատ է եկել, որ Աստղիկ-Վահագնի հանդէսի պատարագին փեսեղբայրութիւն անէր:

Յուպը ձեռքին մի ասել մարդու առաջնորդութեամբ գաղթական բազում մարդկանց շարասիւնը ժամանում է մէհեանի առաջ: Նրանց ընդառաջ ելած Վահուանի քրմապետը խնդրում է իմանալ ո՞վքեր են նրանք, ինչու՞ եւ որտեղից են ժամանել Աշտիշատ:

-Շիւրիւնի-Չեւս աստուծոյ ուստը Ապոլլոնի ինն Մուսա քոյրերի պաշտամունքի լեւները լանջերի շէնքերի ու մեր անցած ճամբաների երկրներում բնակած Արմէն-հայերի մարդկանց շարասիւնն են բերել Աշտիշատ, մասնակցելու Աստղիկի-Վահագնի հարսանեաց հանդէսի պատարագին, արքաներին ու իշխաններին խնդրելու մշտական բնակութիւն հաստատել

իրենց տարած քներում: Ինձ ուղեկցողները խնդրում են, որ ես էլ լինէի Վահագնի ու Աստղիկի հարսանիքի պատարագի չներից: Վահուանի քրմապետը, արքաները, քրմապետ թագաւորներ, իշխաններ ուրախ դիմաւորում են նրանց, յորդորում աշխարհական գաղթական ժողովուրդին բնակութեան ընդունել: Վահուանի քրմապետը, գաղթականների առաջնորդին թեւանցողի արած գնում են մէհեան:

Յուպը ձեռքին այդ Արմին մարդը ես եմ, դու ես: Նրան հետեւող մարդիկ մենք ենք, դուք էք, ովքեր հազար-հազարներով վերադարձան նախնիների երկիր: Նրանց սրտերում չէին մարել իրենց նախնիների ոգու ջահերը, իրենց արքաների քաջ գործերի պատումները, իրենց բարեպաշտ աստուածների իմաստութեան հեքիաթային ծիածանումը իրենց նոր հաւատքի տոնախմբութիւնների լոյսին: Իրենց նոր հաւատքի վարդապետի պատարագի տաճարների պատելը իրենց հին աստուածների մէհեանների որմերի քարերից, որտեղից հնչում են Միհր արեւ աստուծոյ արեւագալի երգերի տաղերի հնչիւնների արձագանքները: Վկայ՝ արեւագալի լոյսի բիւման փառաբանումը, վկայ՝ նոր հաւատքի վարդապետի իջնելը նախնիների մէհեան, վկայ՝ նրա աստուշանի սրբազան կրակի վրայ նոր

տաճարի արարումը, վկայ՝ այն կրակ լոյսը որ վառում են իրենց նոր հաւատքի տաճարներում: Վկայ՝ իրենց վարդապետի պատարագի երգերի հնչիւնները, որոնք իրենց նախնիների ծիների հետ հասել Արմին-Հայ իմաստունների հոգիներին, վկայ՝ այն բոլոր շուրջ պարերը որ կատարում ենք հարսանեկան հանդէսներին, վկայ՝ իմաստուն Մարտիրոս Սարեանի հոգում անթեղուած նախնիների լոյսի ու կրակի գոյների հեղեղը իր երկնած պատուներին: Վկայ՝ Նաւասարդը, աստուածամարդ Հայկի փառաբանումը, վկայ՝ Գառնի աւանի Միհրի տաճարում Վահագնի, Աստղիկի, Անահիտի ծննդեան տօնախմբութիւնների խորհրդանշանը: Վկայնք ենք մենք, որ Արմին-հայերի հին աստուածների արարման պաթոսով շարունակում քայլել տիեզերական հեռուների ճամբաներով:

Քրմուհիները, գեղանուշ տաղերի երգերով շարան-շարան գնում Վահագնի սենեակ, կարմիր վարդերի ու ձնծաղիկների փունջ նուիրում՝ Աստղիկին, Վահագնին՝ երկնից քաղած աստղերի փունջ: Վահագնը Աստղիկին գրկած, Միհրը վարդերի, ձնծաղիկների ու աստղերի փունջերը բարձր պահած գալիս են աստուածների բազմաների առաջ: Արքաները, քրմապետ թագաւորները, Բիւրախների իշխանները իրենց տիկնանց հետ խոնարհուում նրանց: Աշխարհական ժողովուրդը գինուց թէ սիրուց խենթացած, մէհեանի շուրջ-բոլորը հարսանեկան պարեր բռնում, ծիրանափողեր են հնչում, տաղասած գուսանները բանբիւնների նուագածութեամբ երգեր հնչում, նրանց ողջոյնների արձագանքները հասնում Մուշ-Մուսասիր իսլաղի-Հայկ աստուծոյ տաճար, իրենց Արա, Նար Մովինար, Անահիտ, Նանէ, Վանաստուր, Տիր մարդացած աստուածների տաճարներ, որոնք գալու են Աշտիշատ, մասնակցելու Աստղիկի ու Վահագնի հարսանեաց հանդէսին, Աստղիկ հարսի վարդավառեան տօնախմբութիւններին, արքաների, թագաւորների, իշխանների, աշխարհական ժողովուրդի սրտերին հոսելու իսլաղի-Հայկ աստուծոյ տիեզերական իմաստութիւնը, իրենց երթի ճամբաների արմիւնների լեռնաշխարհի յաւիտենականութեան հուր շաղ տալու: Քուրմ-քրմուհիների դասը նուագարանների անուշ

հնչիւնների հետ երգում, մեներգում են մէհեանական քաղցր տաղեր: Արմին-Հայ, գնա՛ այդ տաղերի երգերը այժմ ունկնդիրը՝ հայոց խոսքով թագաւորի սոճիաց անտառի դիմաց յառնած, Միհրի սիւնագարդ տաճարի ատրուշանը բոլորած ծիածան հանդերձներով քրմուհիներից, նրա հրապարակում Վահագնի, Անահիտի ծնունդը տօնախմբող Արմին-հայերի նախնիների շուրջ պարերի շարքեր մտիր, եւ պիտի հաւատաս իմ այս գիրին...:

Հագար-հագար դարերից եկած Արմին-Հայ, քու մարդացած աստուածների, քու Նահապետների իմաստութեան ոգու ջահերը քու է-ի մէջ, պատուիր երեւակայութեանդ պատասխանելը, դու էլ արի Աշտիշատ, մեզ հետ պատարագելու Աստղիկի ու Վահագնի հարսանեաց հանդէսը, քու հին աստուածների պատարագը: Դու պարտաւոր ես նրանց պատարագին մասնակցելու, այդ նրանք են յաւիտենականութեան ոգու հուր հոսել քու է-ին, քու հոգուն:

Տերք բոլորաշար Քրմուհիների շարքերի երգերի ուղեկցութեամբ, Միհր աստուածը կարմիր կրակով լիքը ատրուշանը որպէս նարօտ վեր պահած, Աստղիկին ու Վահագնին առաջնորդում Անահիտի բազմիս առաջ: Արմինն է նրանց ընդառաջ գալիս, ցուպը նետում աստուածների առաջ, գնում գրկում Աստղիկին, Վահագնին ու կանչում՝


Երկնում էր երկինքը, երկնում էր երկիրը, երկնում էր ծովը ծիրանի, երկնում էր ծովի մէջ բռնել էր Նաեւ կարմրիկ եղեգնիկին: Եղեգնի փողով ծուխ էր ելնում, եղեգնի փողով բոց էր ելնում, եւ բոցից դուրս էր վազում Մի խարտեաշ պատանեկիկ: Նա հուր մագեր ունէր, Ունէր բոց մօրուք, եւ աչքերն էին արեգակներ: Միհրը, կարմիր կրակով լիքը ատրուշանը Աստղիկի ու Վահագնի գլուխների վերեւ պահած կանչում՝

«Ես էի Արմին-հայերի ծովի ափերին պայթած կրակի լոյսը քաղել եւ այն որպէս ծիածան փուռ նրա ջրերի վրայ: Այդ ծիրանի ծովում էր Վահագնի երկունքը: Այս ատրուշանն եմ որպէս նարօտ կապում նրանց ձապտոններին, նրա անշէջ կրակը յաղթանակի ոգի հոսի ձեր սրտերին»:

# VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books  
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ  
Հին Գիրքերու Նորոգութեան Համար  
Հեռաձայնել՝ ՎԱՀԻ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ



**Vahe Atchabahian**  
1870 E. Layton St. • Pasadena, CA 91104  
**626-354-5924 • vamedia@yahoo.com**

**ՄԱՍԻՍ**  
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**Massis**  
Weekly

You are cordially invited to celebrate  
«ՄԱՍԻՍ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ-ի 33-րդ Տարեդարձի  
Ճաշկերոյթ Պարահանդէս

*Massis Weekly 33<sup>rd</sup> Anniversary  
Dinner Dance*

Երեկոն պիտի խանդավառէ  
սիրուած Երգիչ՝

**Յարուր Յակոբեան**

Performance by:

**HAROUT HAGOPIAN**

Տեղի կ'ունենայ

**Շաբաթ**

**9 Նոյեմբեր, 2013**

Ժամը 8-էն սկսեալ՝

*Saturday November*

**9, 2013**

Starting at 8:00 p.m.

**At the Arbat Banquet Hall**

711 S. San Fernando Rd. Burbank, CA 91502

Յաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնել

For more info. call: (626)7 97-7680

Donation \$75.<sup>00</sup>

